


The image is a full-page background photograph of a mountain landscape. In the foreground, a steep, rocky cliff face is visible, partially covered with green shrubs and small trees. The cliff extends from the bottom right towards the center. In the background, a wide valley unfolds, showing rolling green hills and patches of brownish-grey rock formations. The sky is not clearly visible, suggesting a hazy or overcast day. The overall color palette is dominated by greens and earthy tones.

Տիգրան Մկրտչյան

Գլաճորի  
համալսարանի  
տեղորոշման  
նոր վարկած





ТИГРАН МКРТЧЯН

НОВАЯ ВЕРСИЯ МЕСТОПОЛОЖЕНИЯ  
ГЛАДЗОРСКОГО УНИВЕРСИТЕТА

Ереван  
Издательство «Мугни»  
2016

TIGRAN MKRTCHYAN

NEW HYPOTHESIS OF THE LOCATION  
OF THE UNIVERSITY OF GLADZOR

Yerevan  
Moughni Publishers  
2016

ՏԻԳՐԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԼԱՁՈՐԻ  
ՆԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՏԵՂՈՐՈՇՄԱՆ  
ՆՈՐ ՎԱՐԿԱԾ

Երևան

«Մուղնի» հրատարակչություն

2016

ՆՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Ն)

Մ 806

Խմբագիր՝ Կարեն Մաթևոսյան  
պատմական գիտությունների դոկտոր

Մկրտչյան Տիգրան

Մ 806 Գլաձորի համալսարանի տեղորոշման նոր վարկած /

Տ. Մկրտչյան. – Եր.: Մուղնի, 2016. – 72 էջ:

Գրքում ներկայացվում է հայագիտության մեջ առայժմ չլուծված մի հարցի՝ Գլաձորի համալսարանի տեղորոշման վերաբերյալ նոր վարկած, ըստ որի այն գտնվել է Ներմոնի վանքին մոտ: Նեղինակը վկայակոչում է մի շարք պատմական փաստեր, բերում փաստարկներ և ենթադրություն կատարում համալսարանի գտնվելու հնարավոր տեղի վերաբերյալ, առաջարկելով պեղումների միջոցով ճշտել վարկածը:

Նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՆՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Ն)

ISBN 978–99941–33–79–6

© Մկրտչյան Տիգրան, 2016

© «Մուղնի» հրատարակչություն, 2016

Գլաձորի համալսարանի գտնվելու ստույգ վայրը հայ մշակույթի պատմության չբացված էջերից մեկն է, ուստի հարցի ուսումնասիրությունն արդիական է հայագիտության համար: Նախկինում այս խնդրին անդրադարձել են մի շարք մասնագետներ, Գլաձորի տեղորոշման վերաբերյալ առաջ քաշելով տարբեր տեսակետներ ու վարկածներ, որոնցից ոչ մեկը չի հաստատվել:

Սույն գրքույկում աղբյուրագիտական նյութերի և տեղում կատարված դիտարկումների հիման վրա ներկայացվում է մի նոր վարկած, ըստ որի Աղբերց վանքը կամ Գլաձորը, գտնվել է Ներմոնի վանքին շատ մոտ, նրա հյուսիս-արևմտյան կողմի բարձունքում: Սակայն համալսարանի ուսումնական նպատակներին է ծառայել նաև բուն Ներմոնի վանքը: Տեսակետի հիմնավորումներին կարելի է ծանոթանալ ընթերցելով գրքույկը: Ասենք միայն, որ մենք խմբագրել ենք տեքստը և հեղինակի համաձայնությամբ որոշ լրացումներ կատարել:

Տիգրան Մկրտչյանը (ծնված 1957թ., Եղեգնաձոր) մասնագիտությամբ պատմաբան չէ, այլ ինժեներ և տնտեսագետ, ավար-

տել է նաև Կիևի քաղաքագիտության և սոցիոլոգիայի ինստիտուտը՝ ստանալով քաղաքագետ-սոցիոլոգի որակավորում: Դեռ 1980-ական թվականներին նա զբաղվել է Եղեգնաձորի շրջանի հուշարձաններով, սար ու ձոր շրջելով լուսանկարել է տարբեր վանքեր, եկեղեցիներ, խաչքարեր: Այնուհետև սկսել է պատմական նյութեր և սկզբնաղբյուրներ ուսումնասիրել Մատենադարանում, պատմաբան, ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի (1922-2004) հանձնարարությամբ: Արդեն շուրջ երկու տասնամյակ Սանկտ-Պետերբուրգում բնակվելով Տիգրանը վերջին շրջանում անդրադառնալով իր նախկին դիտարկումներին, 2015-ին կրկին այցելել է այն վանքը, որն իր համոզմամբ Գլաձորն է:

Ի՞նչ կարելի է ասել առաջարկված վարկածի մասին: Այն անկասկած հիմնվում է որոշակի փաստարկների վրա, հատկապես Ներմոնի վանքի հետ եղած կապի բացահայտումը միանգամայն համոզիչ է, սակայն վարկածը կարող է հերքվել կամ հաստատվել միայն նշված տեղում իրականացվելիք, թեկուզ մասնակի պեղումների արդյունքում: Կարևորը, սակայն այն է, որ երկու դեպքում էլ հայագիտությունը շահելու է. հերքման պարագայում ինչ-որ չափով, (քանի որ կուսումնասիրվի գրեթե մոռացության մատնված մի վանք), իսկ հաստատման դեպքում փառավորապես:

**Կարեն Մաթևոսյան**

*պատմական գիտությունների դոկտոր*



# Գլաձորի ժողովրդական հարցի նախադասմունքներ

«Ի հռչակաւոր եւ  
սուրբ մենաստան  
համալսարանիս  
Գլաձորոյ, ընդ հովանեաւ  
Սուրբ Ստեփանոսի»:  
Կյուրոն գրչի 1321թ.  
հիշատակարանից

Նայ միջնադարյան կրթամշակութային  
կյանքի բարձրակետը հանդիսացած  
Գլաձորի համալսարանի պատմությունն ար-  
ժանացել է բազմաթիվ ուսումնասիրողների  
ուշադրությանը. գրվել են ինչպես համալսա-  
րանին, այնպես էլ նրա նշանավոր գործիչնե-  
րին նվիրված տասնյակ գրքեր ու հոդվածներ:

Համալսարանի գտնվելու վայրի մասին  
պահպանվել են բազմաթիվ վկայություններ  
տեղում գրված ձեռագրերի հիշատակարան-  
ներում, որոնց շնորհիվ գիտենք, որ այն եղել է  
Վայոց ձոր գավառում Ս.Ստեփանոս Նա-  
խավկայի անունը կրող Աղբերց վանքում, որը  
մականվանվել է Գլաձոր (ըստ Ղ.Ալիշանի  
տեղում եղել են նաև Ս.Նշան մատուռը և Սուրբ  
Կարապետի գերեզմանը)<sup>1</sup>: Մի քանի հավե-  
լյալ բնութագրումներ նույնպես պահպանվել  
են, սակայն Գլաձորի համալսարանի ստույգ  
տեղը մինչև օրս մնում է անհայտ: Տենց այդ  
խնդրին է նվիրված սույն ուսումնասիրությունը:  
**Որտե՞ղ է գտնվել Գլաձորի նշանավոր  
համալսարանը:**

<sup>1</sup> Ղ. Ալիշան, Սիսական, տեղագրությամբ  
Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893,  
էջ 135, այսուհետև՝ Ղ. Ալիշան, Սիսական:

Այս հարցին փորձել են պատասխանել  
մի շարք վաստակաշատ հայագետներ, և յու-

րաքանչյուրը, հենվելով ձեռքի տակ եղած բազմաթիվ նյութերի ու վկայությունների վրա, փորձել է տալ հարցի պատասխանը: Սակայն իրողությունն այն է, որ ցայժմ վերջնական և համոզիչ պատասխան դեռ չի գտնվել:

Տարկ է նշել, որ ամենից շատ տարածվածը Գլաձորի համալսարանը Թանատի (Թանահատի) վանքի հետ նույնացման կամ նրան մոտ տեղորոշելու տեսակետն է: Դրա պատճառներից մեկն այն է, որ համալսարանի մասին առաջին հիշատակության հեղինակ, Կիլիկիայից Տալաստան եկած Մատթեոս Կիլիկեցին 1283-1284 թթ. գրած իր չափածո հիշատակարանում նշում է.

«Որոյ եկեալ յայս գաւառի,  
Որում անուն Վայձոր կոչի,  
Տուպ ի շիրիմըն Սիւնեցի,  
Ի յԱղբերց վանս մենաստանի,  
Յերկրորդ Աթենս պանծալի»<sup>2</sup>:

2 Դայերեն ձեռագրերի  
հիշատակարաններ, ԺԳ դար,  
կապձեց Ա. Մաթևոսյան, Երևան,  
1984, էջ 552 (այսուհետև՝ ԺԳ դարի  
հիշատակարաններ):

3 Այս կապակցությամբ բազմավաստակ  
ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը  
գրում է. «Դուպ ի շիրիմըն Սիւնեցի, ի  
յԱղբերց վանս մենաստանի» նշանակում  
է ոչ թե «Սիւնեցու շիրիմը Աղբերց վանքում  
է», այլ «Սիւնեցու շիրիմին մոտ՝ Աղբերց  
վանք մենաստանում», ինչպես՝ «ի քաղաքս  
Ղարս կոչեցեալ, իուպ ի Շիրակայս Անու»,  
ոչ թե Ղարսը Անին է, այլ Ղարսը Շիրակի  
Անիի մոտ է...»:  
Տես՝ Ա. Մաթևոսյան, Նոր վկայություններ  
Գլաձորի համալսարանի մասին,  
«Պատմա-բանասիրական հանդես», 1984,  
թիվ 4, էջ 30:

4 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 130:

5 Գ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ  
Պողոնեանք Դայոց պատմութեան մէջ,  
Անթիլիաս, 1969, էջ 19, այսուհետև՝  
Գ. Յովսեփեան, Խաղբակեանք...:

Քանի որ Թանատում է եղել սրբերի շարքը դասված Ստեփանոս վարդապետ Սյունեցու դամբարանը, ենթադրել են, որ վանքի մեկ այլ անունն էլ Աղբերց վանք է, ու դրանք նույնն են: Սակայն Կիլիկիայից եկած մարդու համար ամբողջ Վայոց ձորն էլ «հուպ», այսինքն՝ մոտ էր Սյունեցու շիրիմին<sup>3</sup>:

Այս վկայության հիման վրա Ղևոնդ Ալիշանը ենթադրել է, որ Գլաձորը մոտ է գտնվել Սյունեցու շիրմին, այսինքն Թանատի (Թանահե) վանքին, և այն տեղորոշում է «Պաշքենտ բերդի» (Բուրբաբերդ – Տ. Մ.) մոտակայքում<sup>4</sup>: Նույն տեսակետն է հայտնում նաև Գարեգին Նովսեփյանը՝ Գլաձորը տեղադրելով Բուրբաբերդի արևելյան կողմում<sup>5</sup>: Հետագայում ուսումնասիրելով գլաձորյան ժառանգությունը՝

նա գրում է. «Այս վանքի պատմութիւնը տարօրինակ սկիզբ և վախճան ունի: Անյայտությունից յանկարծ երևան է գալիս ԺԳ. դարի ութսունական թուականի սկզբում իբրև Արեւելեան Նայաստանի մտաւոր կեդրոնը, եւ յանկարծ չքանում անյայտութեան մէջ ԺԴ. դարի կեսին: Անորոշ է նույնիսկ տեղը. այն աւերակները, որոնք Գլաձորի մնացորդները պիտի լինին, չնչին են, նիւթի հետ կապ չունեցող...»<sup>6</sup>: Ո՛չ Ղ. Ալիշանը և ո՛չ Գ. Նովսեփյանը Գլաձորը Թանատի հետ չեն նույնացրել, այլ կարծել են, որ դրանք եղել են իրար մոտ: Թանատն ու Գլաձորը նույնացնող կարծիք են հայտնել Ե. Լալայանը<sup>7</sup> և Ա. Ավետիսյանը<sup>8</sup>:

1984թ. Խորհրդային Նայաստանում պետական մակարդակով նշվեց Գլաձորի համալսարանի հիմնադրման 700 ամյակը: Քանի որ նման կարգի խոշոր միջոցառումներն այն ժամանակ արտոնվում էին Մոսկվայից, խնդիր դրվեց անպայման որոշակի դարձնել համալսարանի տեղը, այլապես կարող էր այդ անորոշությունը տոնակատարության ձախողման պատճառ դառնալ: Շտապ կարգով լայնածավալ պեղումներ կատարվեցին Թանատում, և ոչ այնքան համոզիչ որոշ նյութերի հիման վրա հայտարարվեց, որ գտնվել է Գլաձորի համալսարանը: Այդտեղ էլ արվեց գլխավոր տոնական միջոցառումը, նաև Թանատը Գլաձոր ներկայացնող երկու հորելյանական գիրք տպվեց

Ա. Աբրահամյանի և Ի. Ղարիբյանի հեղինակությամբ<sup>9</sup>:

Սակայն Լ. Խաչերյանը, ապա և Ա. Մաթևոսյանն իրենց հողվածներում համոզիչ կերպով հերքում են Գլաձորը Թանատի հետ նույնացնելու տեսակետը<sup>10</sup>: Բավական է նշել, որ Թանատի հայտնի ու պեղումներից դուրս բերված շուրջ 100 արձանագրություններից ոչ մեկում չեն հանդիպում Աղբերց վանք կամ Գլաձոր անունները, ակնարկ անգամ չկա համալսարանի բաբունապետներ Ներսես Մշեցու և Եսայի Նչեցու մասին:

6 Գ. Յովսեփեան, *Խաղբակեանք, էջ 251*:

7 Ե. Լալայեան, *Շարուր-Դարալագեալի գաւառ, «Ազգագրական հանդէս», գիրք XII, Թիֆլիս, 1905, էջ 267*:

8 Ա. Ավետիսյան, *Գլաձորի համալսարանը, «Էջմիածին», 1956, Դ- ե, էջ 86*:

9 Ա. Աբրահամյան, *Գլաձորի համալսարանը, Երևան, 1983, Ի. Ղարիբյան, Գլաձոր (տեղադրությունը, պեղումները, վիճագիր արձանագրությունները), Երևան, 1983*:

10 Լ. Խաչերյան, *Պատմական աղբյուրներում Գլաձորի հիշատակության հարցի շուրջը, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր, հաս. գիտ., 1965, թիվ 10, էջ 94, Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 20-31*:

Այժմ տեսնենք, թե Գլաձորի համալսարանի տեղորոշման մասին ուրիշ ինչ տեսակետներ են արտահայտվել:

Գ. Գրիգորյանն, իր «Ակնարկներ Սյունիքի պատմության IX-XIV դդ.» աշխատության մեջ Գլաձորի տեղադրության հարցի շուրջ հայտնում է այն կարծիքը, որ Վայոց ձորում կա մի վանք, հիմնված սարալանջին ջրառատ աղբյուրների մոտ: Այն գտնվում է Ալայազ (Եղեգիս – Տ. Մ.) գյուղից 4 կմ հյուսիս-արևելք՝ բարձրադիր մի հարթության վրա, որտեղից այսօր էլ բխում են քաղցրահամ և սառը աղբյուրներ: Այստեղ են գտնվում «Գյուլու Բուլաղ» վանքի ավերակները: Նա գրում է. «Համաձայն մեր կողմից վերծանված արձանագրությունների՝ վանքը կառուցվել է Սուրբ Աստվածածնի անունով: ... Կարելի է ենթադրել, որ հատկապես այս պատմա-հարտարապետական համալիրը հենց աղբյուրներում հիշատակվող Աղբերց վանքն է, որը լիովին համապատասխանում է նրա աշխարհագրական դիրքին: Եթե այդպես չէ, պետք է ենթադրել, որ այստեղ մեր կողմից հայտնաբերվել է մեկ այլ, նախապես տեղն անհայտ հուշարձան, հնարավոր է Վերին Նորավանքը, որի մասին պահպանվել են բազմաթիվ հիշատակություններ ձեռագիր հիշատակարաններում»<sup>11</sup>:

Նկատենք, որ Աղբերց վանք - Գլաձորը եղել է Սուրբ Ստեփանոս Նախավկայի անունով, իսկ խնդրո առարկա եկեղեցին անվանված է Ս. Աստվածածին: Ինչ վերաբերում է «նորահայտ» Վերին Նորավանքին, ապա այդ մասին Ս. Գ. Բարխուդարյանը դեռևս 1967 թվականին գրել է հետևյալը. «Գյուլում Բուլաղի վանքը գտնվում է գյուղից (Եղեգիս - Տ. Մ.) մոտ չորս կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, լեռնային գոգավորության մեջ գտնվող բլրի տափակ գագաթին: Եկեղեցին բոլորովին ավեր-

ված է. պատերից թափված բեկորների վրա կան արձանագրության մասեր, միակ արձանագրության մեջ եկեղեցին կոչվում է Ս. Աստվածածին... հավանաբար, սա Վայոց ձորի «Վերին Նորավանք» կոչված վանքն է»<sup>12</sup>:

Առկա տվյալներն ուսումնասիրելով՝ Արտաշես Մաթևոսյանը նշում է, որ Գլաձորի համալսարանը կարող էր գտնվել երեք հնարա-

11 Գ. Григорян, Очерки истории Сюника IX-XIV вв., Ереван, 1990, с. 181: Մենք օգտվել ենք ողուսերեն էլեկտրոնային տարբերակից, ուստի մեջբերումներն արվում են թարգմանաբար:

12 Դիվան հայ վիճագրության, պրակ 3, Վայոց ձոր, Եղեգնաձորի և Ապիպեկովի շրջաններ, կապմոլ՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 106, Այսուհետև՝ Դիվան հայ վիճագրության:

վոր վայրերից մեկում «Աղբերց վանք – Գլաձորը գտնվել է Թանատի (Սյունեցու շիրիմ – Վարագա Ս.նշան), Տերմոնի (Ս. Գրիգոր) և Բոլորաբերդի կամ Պռոշաբերդի (Սպիտակավոր Ս. Աստվածածին) վանքերի մոտակայքում»: Ապա ամփոփելով՝ եզրակացնում է, որ «... Ահա մատենագրական, վիմագրական այն նյութերը, որոնք նշում են Գլաձորի համալսարանի գտնվելու գավառը՝ Վայոց ձոր, վանքը՝ Աղբերց վանք, և մոտավոր տեղը՝ Թանատի, Սպիտակավոր Ս. Աստվածածնի և Տերմոնի Ս. Գրիգորի վանքերի մոտակայքում»<sup>13</sup>:

**Ամփոփելով** Աղբերց վանք – Գլաձորի համալսարանի տեղադրության հետ կապված նախորդ ուսումնասիրողների եզրահանգումները՝ կարելի է դրանք խմբավորել.

- ա) Աղբերց վանքը գտնվել է ներկայիս Վերնաշեն գյուղից վեր՝ մեկ կմ հեռավորության վրա՝ Բոլորաբերդի կամ Պռոշաբերդի արևելյան կողմում (Ղ. Ալիշան, Գ. Տովսեփյան, որը հետագայում հրաժարվում է այս կարծիքից)<sup>14</sup>:
- բ) Աղբերց վանք – Գլաձորը գտնվել է Թանատի վանքում կամ նրան կից (Ե. Լալայան, Ա. Ավետիսյան, Ա. Աբրահամյան, Ի. Ղարիբյան):
- գ) Աղբերց վանք – Գլաձորը ներկայիս Եղեգիս գյուղից չորս կիլոմետր հյուսիս-արևելք գտնվող ավերակ եկեղեցին է, որին «Գյուլում Բուլաղ» են անվանել (Գր. Գրիգորյան):
- դ) Աղբերց վանք – Գլաձորը պետք է փնտրել երեք հնարավոր տեղում Թանատի, Բոլորաբերդի, կամ Տերմոնի վանքի մոտակայքում (Ա. Մաթևոսյան):

Ինչպես տեսանք վերոնշյալ տեսակետների մեծ մասը հերքվել է: Առայժմ հանգամանորեն չի քննվել Գլաձորի՝ Տերմոնի վանքին մոտ գտնվելու ենթադրությունը, որին էլ մենք հետամուտ ենք լինելու սույն ուսումնասիրությամբ:

<sup>13</sup> Ա. Մաթևոսյան, , նշվ. աշխ., էջ 30:

<sup>14</sup> Գ. Յովսեփեան, Խաղբակեանք..., էջ 251:

## Գլաձորի համալսարանի աշխարհագրական միջավայր

**«Ի նահանգիս Սիւնեաց,  
ի գաւառիս Վայոյ ձոր,  
բարձրադիտակ  
մենաստանիս Գլաձոր»:**

**Գրիգոր գրչի 1335թ.  
հիշատակարանից**

15 Վարդան Վարդապետ, Աշխարհացոյց,  
քննական հրատարակություն  
Հ. Պերպերեանի. Փարիզ, 1960, էջ 15:  
Այս և հաջորդ մեջբերումներում ընդգծումները  
մերն են - Տ. Ս.:

16 Վարդան Արևելցու երկում առկա  
տեղեկության մասին Ա. Մաթևոսյանը հետևյալ  
կարևոր ծանոթագրությունն է կատարել.  
«Նկատենք, որ 1271 թ. առաջ գրված սույն երկի  
մեջ «կենսաբեր Սուրբ Նշանն եւ Գայլեծոր, որ  
աթոռն է և վարժարան սուրբ վարդապետաց  
մերոց» հատվածը ընդմիջարկություն է,  
կատարված XIV դարի սկզբին: 1282 թ. առաջ  
Գլաձորը չէր հիշվի, 1293 թ. առաջ՝ Ս. Նշանը:  
Իսկ որ այն ընդմիջարկվել է մինչև  
1338 թ., այսինքն՝ Գլաձորի համալսարանի  
գոյության պայմաններում, երևում է «ուր կայ...  
եւ Գայլեծոր, որ աթոռն է և վարժարան  
վարդապետաց մերոց» ներկա ժամանակով  
գրված նախադասությունից: ...Ուրեմն  
ընդմիջարկումը ժամանակակից է եղել  
Գլաձորի համալսարանին»: (Ա. Մաթևոսյան,  
Նոր վկայություններ Գլաձորի համալսարանի  
մասին, էջ 27):

17 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի  
հիշատակարաններ, կապմեջ Լ. Խաչիկյան,  
Երևան, 1950, էջ 272, այսուհետև՝ ԺԴ դարի  
հիշատակարաններ:

Նախ փորձենք հիշատակարանային  
և այլ տեղեկությունների միջոցով  
պատկերացում կազմել Աղբերց վանքի աշ-  
խարհագրական դիրքի մասին:

Գլաձորի վերաբերյալ մատենագրա-  
կան հնագույն աղբյուրը Վարդան Արևելցու  
«Աշխարհացույցն» է, որտեղ կարդում ենք.  
«Վայոց ձոր Եղեգեց ձորն է, ուր կայ կենսա-  
բեր Սուրբ Նշանն, եւ **Գայլ ոյձոր, որ աթոռն է  
և վարժարան սուրբ վարդապետացն մե-  
րոց...**»<sup>15</sup>: Այս վկայության համաձայն Գլա-  
ձորը Եղեգեաց (այն է՝ Եղեգիսի) ձորում է:  
Ուշագրավ է, որ տեղեկության այս հատվածը  
Վարդան Արևելցու երկում կատարված ընդ-  
միջարկություն է, որն արվել է համալսարանի  
գործունեության ժամանակ<sup>16</sup>:

Գլաձորում ընդօրինակված ձեռագրե-  
րից մեկում հանդիպում ենք վանքի դիրքի վե-  
րաբերյալ ուշագրավ տեղեկության: Գրիգոր  
գրչի 1335թ. հիշատակարանից երևում է, որ  
վանքը գտնվել է բարձրադիր վայրում: Նա  
գրում է. «Ի նահանգիս Սիւնեաց, ի գաւառիս  
Վայոյ ձոր, **բարձրադիտակ մենաստանիս  
Գլաձոր**, որ յանհմուտ և գնչու արանց **Գայ-  
լաձոր** ասի»<sup>17</sup>: Այստեղ հետաքրքիր է նաև





գրչի դիտողությունը Գլաձոր անվան հիշտ արտասանության փոխարեն ժողովրդախոսակցական տարբերակի՝ «Գայլաձորի» մասին: Դժվար չէ նկատել, որ Վարդան Արևելցու երկում կատարված վերը բերված ընդմիջարկությունը հենց այդ տարբերակով է:

Ելնելով անվանումից՝ **Աղբերց վանքը** գտնվել է այնպիսի մի տեղում, որտեղ բազմաթիվ աղբյուրներ են եղել: Աղբերց վանք անուն, ըստ էության, նշանակում է աղբյուրների վանք:

Աղբերց վանքից հայտնի վաղագույն ձեռագրերից մեկի (1291թ.) հիշատակարանում բացատրվում է, որ Գլաձորն Աղբերց վանքի մականունն է. «**ի մենաստանս, որ կոչի Աղբերց վանս եւ մականուն Գլաձոր**, ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփաննոսի, ի վարժապետութեան

գիտնական եւ արդիւնական մեծ հռետորի յԵսաո»<sup>18</sup>: Նետագայում այս մականունը (կամ երկրորդ անունը) ավելի մեծ տարածում է գտնում:

Գլաձոր անունը ստուգաբանելով՝ Լ. Խաչերյանը նշում է, որ այն պիտի լինէր «խորանդունդ ձորի» եզերքում կառուցված մի շինություն, որը, թվում է, թե ուր որ է գլորվելու է ձորը<sup>19</sup>:

Ըստ թվարկված տվյալների՝ կարող ենք ասել, որ **Աղբերց վանք - Գլաձորը գտնվել է Եղեգիսի ձորում, բարձրադիր տեղում, որտեղ աղբյուրներ են քխում:**

18 ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 663:

19 Լ. Գ. Խաչերյան, Պատմական աղբյուրներում Գլաձորի հիշատակության հարցի շուրջը, էջ 89:



## Գլաճորի սեղորոշումը Ներմոնի վանքի մոտ

**«Ի վանս Ներմոնի, ընդ հովանեալ Սուրբ Գրիգորիս, եւ առ ոտս մեծ հռետորիս Եսայեա[յ]»:  
Նովհաննես գրչի 1319թ.  
հիշատակարանից**

**Դ**եռևս Ղևոնդ Ալիշանը գրելով Ներմոնի վանքի մասին և վերապատմելով Ստեփանոս Օրբելյանի պատմությունն այս վանքի հիմնադրության վերաբերյալ, ավելացնում է. «... բայց յայլ գիրս ոչ գտանեմ զլիշատակ վանացս, բայց ի սակաւ յիշատակարանաց գրոց, յորս յամի 1318-9 եկեղեցին Ս.Լուսատրիչ, և Յովհաննես ոմն գիտնական սպասատր բանի, որ ընդօրինակէ զգիրս ինչ Նիսացոյն, առ ոտս մեծ վարդապետին Եսայեայ (Նչեցոյ), առաջնորդի հռչակատրն Գայլեձորոյ»<sup>20</sup>: Որպեսզի Ներմոնի վանքում գտնվող Նովհաննեսը ձեռագիր ընդօրինակեր «առ ոտս մեծ վարդապետին Եսայեայ», պետք է այն շատ մոտ լիներ Գլաձորին՝ Եսայի Նչեցու նստավայրին: Սակայն Ղ.Ալիշանի հաղորդած այս տեղեկությանը հետագայի ուսումնասիրողներն անհրաժեշտ ուշադրության չեն արժանացրել՝ թերևս հավելյալ տվյալների և տեղեկության ճշգրտման պակաս զգալով:

Բարեբախտաբար, Վենետիկի ձեռագրացուցակի 1996թ. լույս տեսած Է հատորում ներկայացված են թե՛ Ղ.Ալիշանի վկայակոչած ձեռագիրը (Վենետիկ, ձեռ. 1295 (358),

20 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 125:

Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան), քե՛ նրա արժեքավոր հիշատակարանները: Նկատի ունենալով գլխավոր հիշատակարանի կարևորությունը մեր քննած հարցի տեսանկյունից՝ այն բերում ենք ամբողջությամբ. «Փառք փառատրեալ Սուրբ Երրորդութեանն, որ արժանի արար գտկարս հասանել ի վերջին գիծ տառիս: Արդ, եղև աւարտ գրչութեան սորա ի թվ[ին] Տայոց ի ՉԿԸ (1319) յամսեանս յուլիսի ԻԹ (29) յաւոր յուրբաթու, **ի ձեռն՝ ապիկար եւ փցուն գրչի Յոհաննիսի բանի սպասատրի, ի վանս Տերմոնի, ընդ հովանեալ Սուրբ Գրիգորիս, եւ առ ոտս մեծ հռետորիս Եսայեա[յ], որոյ յիշատակն արհնութեամբ:**

Արդ, ո՛վ պատուական եւ ուսումնասեր եղբարք, որք աւգտիք ի սմանե ընթերցմամբ կամ արինակելով, զմեզ եւ զմերսն ամենայն աղաթս յիշեցէք եւ խոշորութեան եւ սղալանացն անմեղադիր լերութ, զի փութով գրեցաք վասն կարեաց ընթերցման. եւ որք յիշեք՝ յիշեալ լիջիք ի Տեառնե յԱստուծոյ. ամեն:

Լ. Կ. Թ. Լ. Խ. Խ. Ղ. Բ. Ծ. Ե. Մ. Տ. Ծ. Ե. Կ. Ի. Բ. Լ. Մ. Ծ. Տ. Զ. Ղ. Մ.

(ծածկագրված է՝ Յոհաննես գրիչ գրողս յիշեցէք):

Այս ամի անկաւ պատերազմին բարեպաշտ պարոնն [Պա]ղտեն յանարեն Խորումչոյ, զոր եւ նա ըստ արժանայն բեւեռեցաւ ի փայտի ի դուռն արքայի» (թերթ 172բ)<sup>21</sup>:

21 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխթարեանց ի Վենետիկ, հ. է (յօրինեաց Ս. Ճեմճեմեան), Վենետիկ, 1996, էջ 496: Ձեռագրում կա ևս երկու փոքր հիշատակարան. «Ձառաջին վայելալու եւ զգրիչ տառի՝ Յոհաննես աղաչեմ յիշել ի Տէր հանդերձ ծնողաբ փի եւ դուք յիշեսցիք ի Տէր: Գրեցաւ ի թուին ՉԿԵ (1318) յամսեանս յուլիս Գ (3), ասարտեցաւ ի վանս Դերմոնի, ընդ հովանեալ Սուրբ Լուսաւորչիս» (68ա), «Նաեւ զմեղսամակարդ ոգիս Յակոբ[ը] Թագորցի սպասաւոր բանի աղաչեմ յիշել ի Տէր» (68ա): Հիշատակարանն արժեքավոր է նաև Բուդա Օրբելյանի մահվան հանգամանքների մասին պահպանած տեղեկությամբ:

Այսպիսով, Տովհաննես գրիչը Դավիթ Անհաղթի փիլիսոփայական երկն ընդօրինակել է պատվական և ուսումնասեր անձանց համար Տերմոնի վանքում Ս. Գրիգոր եկեղեցու հովանու ներքո և «**առ ոտս մեծ հռետորիս Եսայեա[յ]**», այսինքն՝ Գլաձորի բարունապետին շատ մոտ գտնվելով:

**Տաջորդ կարևոր հիշատակարանը** պահպանվել է Ղ. Փիրղալեմյանի ընդօրինակությամբ, պատկանել է Գլաձորում գրված, սակայն այժմ գտնվելու տեղն անհայտ մի Աստվածաշունչ մատյանի: Հիշատակա-



Հերմոնի վանքի 17-րդ դարում վերաշինված եկեղեցին (Լուս.՝ Դ. Դավթյանի):

րանի հեղինակը ստացողն է՝ Առաքել Տաղբատեցին, ըստ երևույթին, շատ բժախնդիր մի մարդ, որը նշում է մատյանի գրչության սկսման ու ավարտման ստույգ օրերը, միաժամանակ հայտնում, որ մատյանը ստեղծվել է Աղբերց վանք-Գլաձորում Սուրբ Նախավկայի և Սուրբ Գրիգորի հովանու ներքո. «Արդ, եղեւ սկիզբն գրութեան սորա ի թվիս ԶՏԶ (1327), ի յամսեան մայիսի Ի (20) յերեքշաբթի՝ տօնի Երեւման Խաչին, **ի վանս Գլաձոր, որ կոչի Աղբերց վանք, ընդ հովանեաւ Սուրբ Նախավկային եւ Սուրբ Գրիգորիս:** Եւ եղեւ աւարտ սորա ի սկսեալ նոր ամին՝ ԶՏԷ (1328), յամսեան օգոստոսի հինգն, ի տոնի Սրբոց Վարդանանց»<sup>22</sup>:

Ինչպես հայտնի է, Գլաձորում չի եղել Ս. Գրիգոր եկեղեցի (որևէ այլ աղբյուրում չի հիշատակվում), մինչդեռ, ինչպես տեսանք, այդ անու-

նով էր հայտնի Հերմոնի վանքը:

1311-ին Հերմոնում գրվել է մի մատյան Եսայի Նշեցու աշակերտ և հոգեգավակ Տի-

<sup>22</sup> Դ. Փիրղալեմեան, *Նշխարք պատմութեան Հայոց, հ. Բ (Մատենադարան, ծեռ. 4515, էջ 81-85), տես նաև Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 174:*

րացուի պատվերով: Ձեռագիրը պահվելիս է եղել Մշո Առաքալոց վանքում, սակայն, ցավոք, Տայոց ցեղասպանության տարիներին կորել է: Այնուամենայնիվ, վանքի ձեռագրացուցակում առկա է համառոտ նկարագրություն, որտեղ ասվում է, որ ձեռագրում եղել է Եսայի Նչեցու դիմանկարը երկու աշակերտների՝ հավանաբար Տիրացուի և Թորոս նկարչի հետ<sup>23</sup>:

### **Ուրիշ ի՞նչ ընդհանրություններ կան Գլաձորի և Տերմոնի միջև:**

Վայոց ձորի վիմագրական հսկայական ժառանգությունն ամփոփող «Դիվան հայ վիմագրության» շարքի 3-րդ պրակում ընդամենը երկու տեղ է հանդիպում Եսայի անունը (նշանակում է այն այս կողմերում տարածված անձնանուն չէր), մեկը Սելիմի քարավանատան արձանագրության մեջ, որտեղ Չեսար Օրբելյանը նշում է, որ շինությունը հիմնադրել ու կառուցել է աղոթքներով «**րաբունապետին Եսառ**»<sup>24</sup>, որն անկասկած Եսայի Նչեցին է: Միակ վանքը, որտեղ երկու արձանագրության բեկորների վրա հանդիպում են «**Եսաի վարդապետ**»<sup>25</sup> բառերը (դրանք նվիրատվական վիմագրեր են եղել, որոնց քարերը կոտրատելով օգտագործել են 17-րդ դարում կառուցված բազիլիկ եկեղեցու շարվածքում) Տերմոնն է: Վերը վկայակոչված հիշատակարանները նկատի ունենալով՝ չի բացառվում, որ այստեղ ևս հիշատակվում է Գլաձորի րաբունապետ Եսայի վարդապետը:

23 Հիշատակարանում նշվում է, որ ձեռագիրը գրվել է. «...հրամանա... նախասարկաազին՝ Տիրացուին, սպասարկողին եւ հոգեւոր որդեկի սուրբ եւ երանաշնորհ րաբունապետի աստուածախաւս եւ տիեզերայոյս վարդապետի Եսայեայ...»: Ձեռագրում եղել է՝ «Եսայեայ րաբունապետի պատկեր և երկու տիրացուներու, որոնք ծունկի եկած են. միոյն գլովսին վերն գրուած է «անպիտան Թորոս» (Յուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, կապմ.՝ Մուրատեան Ս., Մարտիրոսեան Ն., Երուսաղէմ, 1967, էջ 17):

24 Դիվան հայ վիմագրության, էջ 178:

25 Նույն տեղում, էջ 138:

Կարող է տպավորություն ստեղծվել, որ մենք նույնացնում ենք Աղբերց վանք-Գլաձորն ու Տերմոնի վանքը: Սակայն իրականում ցույց ենք տալիս դրանց չափազանց մոտ լինելը, որը, կարծում ենք, արտահայտվել է նաև միասնական ուսումնական գործունեությամբ:

### **Որո՞նք են մեր մյուս փաստարկները:**

Գլաձորը գտնվել է Եղեգիսի ձորում, որտեղ էր նաև Օրբելյանների նստավայր Եղեգիս քաղաքը: Գրիչ Սարգիս կրոնավորը 1306թ. ընդօրինակել է մի Ավետարան «ի





Հերմոնի հին եկեղեցու արձանագիր քարերը վերաշինված եկեղեցու պատերի մեջ (Լուս.՝ Դ. Դավթյանի):

մայրաքաղաքիս Եղեգիս, ընդ հովանեաւ երից տաղաւարացս, Սուրբ Կաթողիկէիս, և Սուրբ Աստուածածնիս, և **Սուրբ Նախավկայիս**...»<sup>26</sup>: Քանի որ Եղեգիսում Սուրբ Ստեփանոս Նախավկայի անունով եկեղեցի չկա (համեմայն դեպս այլ աղբյուրներում չի հիշատակվում), կարելի է ենթադրել, որ այստեղ նշված է մոտերքում գտնվող մեկ այլ նշանավոր եկեղեցու անունը: Ինչպես բազմիցս նշվեց, հենց այդ անունով էր հայտնի Աղբերց վանք-Գլաձորի եկեղեցին:

Գլաձորը մե՞ծ վանք էր, թե՞ փոքր: 1313թ. Պողոս գրիչը նշում է՝ «ի մեծ մենաստանիս, որ Գլաձոր յուրջորջի, ի դրան Սուրբ Նախավկայիս»<sup>27</sup>: Բայց 1323թ. մեկ այլ հիշատակարանում հակառակն է ասում Գլաձորի ըրարունապետը՝ Եսայի Նչեցին. «...Բայց տեղի գրութեան սորա եղև ի գաւառիս Սիւնեաց, **ի նեղ եւ յանձուկ արքեւանիս**»<sup>28</sup>: Այսինքն՝ այդ վայրն իրականում այնքան էլ մեծ չէր, նեղ էր ու անձուկ (Նայկազյան բառարանն անձուկը բացատրում է՝ «դիրքն է փոքրիկ, նեղ, անմասն ի լայնութենէ կամ յընդարձակութենէ»<sup>29</sup>): Չարմանալիորեն կարծես հենց

այս բնութագրմանն է համապատասխանում Գլաձորի համալսարանը՝ Եսայի ըրարունապետին ու նրա սաներին ներկայացնող, հենց Գլաձորում նկարված ու մեզ հասած միակ մանրանկարը (հավանաբար ատենախոսու-

26 ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 24:

27 Նույն տեղում, էջ 92:

28 Նույն տեղում, էջ 182:

29 Նոր բառգիրք հայկապեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 196:





30 Մանրանկարը պահպանվել է 1299թ. մի ձեռագրում (Երուսաղեմ, ձեռ. 365), որը պարունակում է Գևորգ Սկևռացու «Մեկնութիւն Եսայայ» գործը (Լ. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց հ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 270): Ստացողի հիշատակարանը, կարելի է ասել, ձեռագրի թերթին գրված մի նամակ է, որի մեջ Կեսարիայի Կոստանդին եպիսկոպոսը հայտնում է, թե իր խոստացած այդ գիրքը (որը դեռ չէր կապված ու կապված, այլ բաղկացած էր 20 պրակից) Մրենի Վարդան եպիսկոպոսի ձեռքով ուղարկում է Գլաձորի համալսարանի ռաբրուսպետ Եսայի Նչեցուն և նրան է դիմում ուղիղ խոսքով՝ «...տվի ի տեր Վարդան Մրենու եպիսկոպոսն, որ բերե առ ձեզ» (ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 848): Ձեռագրի միակ մանրանկարը, որը տեղավորված է մատյանի սկզբում (էջ 2) և վերին մասում ունի՝ «ԲԱԲՈՒԼԱՊԵՏՆ ՄԵՐ ԵՍԱՅԻ» մակագրությունը, փաստորեն, ձեռագրում ավելացվել է արդեն Գլաձորում: Նկարի վերին ծայր անկյունում գահավորակին բազմած ռաբրուսպետն է, մի ձեռքում գավազան, մյուսն օրհնության դիրքով: Աշակերտներն ուղղանկյուն տարածքի աջ ու ձախ կողմերում են, համապատասխանաբար՝ 27 և 14 հոգի, որոնցից 8-ի ձեռքին գիրք կա, իսկ մեկը պատկերի ողջ կենտրոնում պարտեզմոդ ծառի (նոնենու) բնից ելնող մի ճյուղին է հենել փոքրիկ գրակալն ու պատրաստվում է բացել իր մատյանը: Վերջինիս գլխին թասակ կա, ի տարբերություն վեղարավորների (այդպիսի գլխարկով մեկն էլ առանձնացված է պատկերի ստորին մասում), որը վկայում է նրա՝ կրոստեր ուսանող լինելու մասին: Բոլոր պատկերվածների դեմքերն անհատականեցված են, ինչից երևում է, որ նկարիչը ճանաչել է նրանց: Մանրանկարի շրջանակից դուրս, ներքևի ստորին աջ կողմում մի փոքրամարմին ծնկած մարդ է պատկերված, որը հավանաբար նկարիչն է (քանի որ ստացողը Եսայի Նչեցին էր): Նրա դեմքը երեք քառորդով շրջված է դեպի դիտողը, ձեռքերն առաջ է պարպել օրհնություն խնդրողի դիրքով: (Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի):

թյուն ներկայացնելու պահ է պատկերված), որտեղ նրանք պատկերված են կարծես մի նեղ ու երկար տեղանքում, բնության գրկում<sup>30</sup>:

Այնուամենայնիվ, ինչպե՞ս է լուծվել աշակերտության տեղավորման խնդիրը, քանի որ աղբյուրներից դատելով համալսարանի սաները փոքրաթիվ չեն եղել (ստույգ թիվ հայտնի չէ): Մեր կարծիքով համալսարանի ուսումնական գործին ծառայել են և՛ Գլաձորը, և՛ Տերմոնը: Պատահական չեն Առաքել Տաղբատեցու խոսքերը՝ «**ընդ հովանեա Սուրբ Նախավկային եւ Սուրբ Գրիգորիս**»։ Ինչպես հայտնի է Գլաձորում եղել են վարդապետական և քահանայական լսարաններ և միանգամայն հնարավոր է, որ, օրինակ, քահանայական լսարանի սաները Տերմոնի վանքում էին, իսկ վարդապետականինը՝ Գլաձորում մեծ ուսուցչապետի օթևանում: Այս վարկածի հաստատման դեպքում պարզ կլինի նաև, որ Եսայի Նչեցու մահից հետո Գլաձորի համալսարանը ոչ թե Գարեգին Տովսեփյանի խոսքերով ասած՝ «յանկարծ չքանում է անյայտութեան մեջ», այլ **նոր ուսուցչապետի գլխավորությամբ բողոնում է վերին վանքը և իջնում ներքին վանք՝ Տերմոն**:

Ի դեպ, նկատենք, որ համալսարանի փոխադրումն այլ վայր, այն ժամանակներում այնքան էլ հեշտ գործ չէր՝ մանավանդ կուտակված մեծաթիվ ձեռագրերը նկատի ունենալով: Այդ մասին կարելի է ենթադրել ավելի ուշ շրջանում գրված մի հիշատակարանից: 1394-ին Տովհաննես անունով գրիչը մի ձեռա-





Չերմոնի վանքը ենթադրյալ Գլաձորի վանքից դիտված:

գիր է ընդօրինակել, իսկ նախօրինակի մասին ասում է, որ այն վերցրել է հին վարժարանի գրքերի արկղերի միջից՝ Չերմոնի վանքում. «... գտեալ եղև **ի յարկեղս գրոց ի հին վարժարանի**, ի Չերմոնի վանս կոչեցեալ»<sup>31</sup>: Սա նշանակում է, որ երբ 1356-ին րաբունապետ Տիրատուր Կիլիկեցու մահից հետո Տովհաննես Որոտնեցին համալսարանի սաների հետ Չերմոնից տեղափոխվել է Որոտնավանք, Գլաձոր-Չերմոնի «հին վարժարանի» մատենադարանի առնվազն մի մասը թողնվել է տեղում գրոց արկղերի մեջ:

Մեր առաջադրած վարկածի օգտին խոսող մի քանի փաստարկ էլ կարելի է ներկայացնել Չերմոնի վանքում գրված 15-րդ դարի հիշատակարաններից:

Նայտնի է, որ Գլաձորում է թաղվել համալսարանի առաջին րաբունապետ Ներսես Մշեցին, և նրա գերեզման-դամբարանը դարձել է վանքի սրբություններ-

31 ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 608:

րից մեկը: Օրինակ, 1318թ. հակոբ Թագորցին Գլաձորում գրում է «... ընդ հովանեաւ Սուրբ Ստեփանոսի... եւ **դամբարանի սուրբ վարդապետին Ներսէսի**»<sup>32</sup>: Մահից հետո Գլաձորում է հողին հանձնվել նաև Եսայի Նչեցին (1338), իսկ Տիրատուր Կիլիկեցին հուղարկավորվել է հերմոնում (1356): Գրիչ Գրիգոր Ախալցխացին, 1419թ. հերմոնում գրած հիշատակարանում բավականին մանրամասն խոսելով տեղի սրբությունների մասին, հայտնում է. «...ի վանս, որ կոչի հերմոնի, ընդ հովանեաւ **Սուրբ Լուսատրչիս Գրիգորի, եւ Սուրբ Յակոբայ սուրբ նշանիս, եւ սուրբ րաբունեաց դամբարանացս**, որ աստ կան հանգուցեալ սուրբ նշխարք նոցայ...»:<sup>33</sup> Այստեղ հնարավոր է երկու ենթադրություն, որ գրիչը նկատի ունի միայն հերմոնում թաղված Տիրատուր Կիլիկեցուն և այլ ուսուցիչների, կամ նաև Գլաձորում թաղված րաբունապետերին, որն ավելի հավանական ենք համարում, քանի որ ասվում է «սուրբ ուսուցիչների դամբարանների» մասին:

1460թ. գրիչ Ջաքարիան հերմոնում գրում է. «...ի մենաստանս հերմոնի վանք... ընդ հովանեաւ Լուսատրչիս մերոյ, եւ Սուրբ Յակոբիս՝ կենաց բարեխաւսի, եւ **Սուրբ Ստեփանոսիս**, եւ Սուրբ Յովաննիսիս, եւ այլ սուրբ նշանացս, եւ նշխարացս սուրբ հերմոն հգնավորի, եւ **սուրբ վարդապետացս**, որ աստ հանգուցեալ կան»<sup>34</sup>: հարց է առաջանում, թե այստեղ հիշատակված Սուրբ Ստեփանոսը հերմոնում եղած մի խաչ է (ինչպես Ս. հակոբը), թե՞ այստեղ նշված է Աղբերց վանք-Գլաձորի Ս. Ստեփանոս Նախավկայի եկեղեցին (քանի որ հերմոնում այդ անունով եկեղեցի չկար): 1469 թվականին հերմոնում գրված միանգամից երկու հիշատակարան ավելի հավանա-

կան են դարձնում վերոնշյալ հիշատակարանում Ս. Ստեփանոսի՝ եկեղեցու անուն լինելը: Գրիչ Անանիան իր ընդօրինակած Մաշտոցի և Ավետարանի հիշատակարաններում բառացիորեն կրկնվող խոսքերով գրչության տեղի մասին նշում է. «գրեցաւ ի վանքս հերմոնի, ընդ հովանեաւ Սուրբ Լուսատրչիս, եւ Սուրբ Յակոբիս, եւ **Սուրբ Ստեփանոսիս**, եւ **սուրբ վար-**

32 Ձեռագիրը պահվում է Նոր Զուղայում (թիվ 166), հիշատակարանը տես՝ Ա. Աբրահամյան, *նշվ. աշխ.*, էջ 165:

33 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կապմոդ՝ Լ. Խաչիկյան), մասն Ա, Երևան, 1955, էջ 656:

34 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կապմոդ՝ Լ. Խաչիկյան), մասն Բ, Երևան, 1958, էջ 134:

35 Նույն տեղում, էջ 290-291:

**դապետացս**, որ աստ կան հանգուցեալ»<sup>35</sup>: Այն, որ Սուրբ Ստեփանոսը եկեղեցի է, երևում է Ներմոնում 1478-ին գրված մեկ այլ հիշատակարանից՝ «...ի յանապատիս Ներմոնի վանիցս, ընդ հովանեաւ Սուրբ Լուսատորչիս եւ Սուրբ Յակովբի **եւ այլ ամենայն սրբոց եկեղեցեացս**»<sup>36</sup>:

Այսպիսով, ենթադրում ենք, որ վերը բերված հիշատակարաններում արձանագրված **«սուրբ րաքունեաց դամբարաններ»** կամ **«սուրբ վարդապետներ»** խոսքերը վերաբերում են Գլաձոր-Ներմոնի սրբացված րաքունապետներին՝ Ներսես Մշեցուն, Եսայի Նչեցուն և Տիրատուր Կիլիկեցուն, իսկ հիշատակված Սուրբ Ստեփանոսը՝ Աղբերց վանքի եկեղեցին է: Այստեղ կարող է առարկություն լինել, քե՛ն՝ գուցե Ս. Ստեփանոսը հենց Ներմոնում գտնվող մի եկեղեցի է եղել: Սակայն այդ դեպքում այն կհիշատակվեր Ներմոնի 15-րդ դարի երկու տասնյակից ավելի բոլոր հիշատակարաններում, ինչպես որ դա տեսնում ենք Ս. Գրիգոր Լուսավորչի և Սուրբ Նակոբ խաչի դեպքում («ընդ հովանեաւ Սուրբ Լուսատորչիս Գրիգորի, եւ Սուրբ Յակոբայ սուրբ նշանիս»), մինչդեռ Ս. Ստեփանոսի անունը հանդիպում է միայն երեք հիշատակարանում, ընդ որում՝ «սուրբ վարդապետաց» հետ միասին, որը ցույց է տալիս դրանց կապը:

36 Ժե դարի հայերեն ձեռագրերի  
հիշատակարաններ, մասն Բ, էջ 429:

Հայտնի է, որ 13-րդ դարում, մինչև Գլաձորի գործունեության սկիզբը (1282թ.), Վայոց ձորի բոլոր վանքերում միասին վերցրած կրկնօրինակվել է (մեզ է հասել) միայն մեկ ձեռագիր՝ Խաղբակյանների իշխանական տան նստոց Սրկդոնքի կամ Սարկոդոնքի (ներկայիս Վերնաշեն) մոտ գտնվող Բոլրաձորի անապատում, որն ավելի հայտնի է որպես Սպիտակավոր Սուրբ Աստվածածին: Իսկ ահա Գլաձորի հիմնադրությունից հետո՝ 1282-1300 թվականների ընթացքում գրվել է (մեզ են հասել) ավելի քան 23 ձեռագիր՝ կրկնօրինակված շուրջ 13 վանքերում՝ չհաշված Գլաձորյան ժառանգությունը: Այսպես, գրչության կենտրոնների են վերածվում Աղո անապատը, Խոտակերաց Սուրբ Նշանը, Նորավանքը, Վերին Նորավանքը, Գնդեվանքը, Թանատի վանքը, Արատեսը, ինչպես նաև Եղեգիսն ու Տորսը և այլն<sup>37</sup>:

Այս շրջանում և հետագայում մինչև Գլաձորում համալսարանի գործունեության դադարումը, Տերմոնի վանքից հայտնի է ընդամենը երկու ձեռագիր, մեկը 1319 թվականի Տովհաննես գրչի՝ մեզ արդեն ծանոթ մատյանն է՝ գրված «ի վանս Տերմոնի... առ ոտս

37 ԺԳ դարի հիշատակարաններ, էջ էջ 556, 579, 595, 674, 681, 678, 791, 794, 797, 825:

մեծ հռետորիս Եսայեա[յ]», իսկ մյուսում 1311 թ., եղել է Եսայի Նչեցու պատկերը երկու աշակերտի հետ:

Տետաքրքիր է, որ նորաստեղծ համալսարանում գրված և մեզ հասած առաջին ձեռագրում (Ստեփանոս գրիչ, 1282թ., պատվիրատու՝ Ներսես Մշեցի, սրբագրող՝ Եսայի Նչեցի) չի նշված գրչության վայրը, իսկ Աղբերց վանք անունն առաջին անգամ հիշատակված է համալսարանի հիմնադրումից երկու տարի հետո միայն՝ 1284-ին<sup>38</sup>: Գլաձոր անվանը հանդիպում ենք 1291-ին (համալսարանի հիմնադրումից ինը տարի անց), գրիչ Նովհաննեսի հիշատակարանում, որտեղ նա գրչության վայրի մասին հայտնում է.

«...ի մենաստանս Աղբերց վանս եւ մականուն Գլաձոր...»<sup>39</sup>:

Տետաքրքիր է, որ Ստեփանոս Օրբելյանն իր Պատմության մեջ, որն ավարտել է 1297 թվականին, նշելով Վայոց ձորում մշտապես գործող յոթը վանքերը, դրանց թվում հիշատակում է Ներմոնի վանքը, սակայն, Աղբերց վանքը կամ Գլաձորը չի հիշատակված: Նամենայն դեպս, նա ավելացնում է՝ «...բայց այլ եւս բազումք կային զորս ոչ թուեցաք»<sup>40</sup>:

Զարմանալի է նաև, որ սկսած 1284 թվականից, Եսայի Նչեցու գրած, ինչպես նաև պատվիրած բոլոր ձեռագրերում չի նշված գրչության վայրը (համենայն դեպս այդպիսի նշում չի պահպանվել): Ի՞նչ է սա. պատահականությո՞ւն, թե՞ կանխամտածված արարք՝ Պռոշյան և Օրբելյան մրցակից իշխանական տների՝ համալսարանի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հավասարակշռությունը պահելու համար. ավա՛ղ, այս մասին կարելի է միայն ենթադրություններ անել...

38 ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 529, 551-554:

39 Նույն տեղում, էջ 663:

40 Ստեփանոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 340:

## Գլաձորի համալսարանի հովանավորների հարցի շուրջ

**«...ի յիշխանութեան և  
տէրութեան համօրէն  
գաւառացս մեծ իշխանիս  
Բուրթելի, և որդոց  
նորին՝ Պէշգենի և  
Իւանէի, իսկ ի տեղոյս  
տէրութեան՝ թոռանց  
մեծին Պողոշայ՝ Ամիր  
Նասանայ և Օումայի»:**

*Գրիշ Նունանի 1334թ.  
հիշատակարանից*

Այժմ անդրադառնանք մեկ այլ խնդրի՝  
ն<sup>ո</sup>ր իշխանական տունն է եղել Գլաձո-  
րի հովանավորը: Տենց սկզբում նշենք, որ մեր  
կարծիքով վանքը հովանավորել են և՛ Պռո-  
շյանները (Խաղբակյաններ), և՛ Օրբելյաննե-  
րը: Նարկ է նշել, որ Գլաձորի համալսարանի  
պատմությանն անդրադարձող առաջին հե-  
տազոտողների ժամանակ վանքում գրված  
ավելի քիչ թվով ձեռագրերի հիշատակարան-  
ներ էին հայտնի, քերևս այս է եղել պատճա-  
ռը, որ նրանք ավելի մեծ տեղ են հատկացրել  
Պռոշյաններին: Ա. Աբրահամյանն անգամ  
այսպիսի միտք է հայտնում. «Ո՞վ է եղել Գլա-  
ձորի համալսարանի հիմնադիր բարերարը:  
Թեև պատմական աղբյուրներում որոշակի  
տեղեկություններ չեն պահպանվել, սակայն  
անուղղակի տվյալները հաստատուն հիմք  
են տալիս կարծելու, որ նրա հիմնադրման  
նախաձեռնողը եղել է Խաղբակյան Պռոշ  
իշխանը (1223-1284)»<sup>41</sup>: Տեսագա շարադ-  
րանքում, իհարկե, այս ենթադրության հա-  
մար ոչ մի հաստատուն հիմք չի նշմարվում, էլ  
չենք ասում այն մասին, որ նման մոտեցման  
դեպքում պարզապես ստվերում է մնում Գլա-  
ձորի համալսարանի անմիջական հիմնադիր  
Ներսես Մշեցի թաքունապետը<sup>42</sup>:

41 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 23:

42 Ներսես Մշեցու գործունեության  
մասին տե՛ս Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան,  
Գլաձորի համալսարանը միջնադարյան  
Ֆայաստանի լուսավորության կենտրոն,  
Երևան, 1984, էջ 6-18:



Տեսնենք, թե ինչ կապ է ունեցել Գլաձորի հետ Սյունյաց մետրոպոլիտ, պատմիչ Ստեփանոս Օրբելյանը: Սյունյաց աշխարհի պատմության վերջում ներկայացնելով իր գործունեությունը՝ նախ նշելով Տաթևի վանքում ստացած քահանայական ուսումը, նա այնուհետև հայտնում է Ներսես Մշեցու կրթարանում ուսանելու և նրանից վարդապետական գավազան ստանալու մասին. **«վարժեցայ ի կրթարանի աստուածեղեն տառից... առի հրաման յաստուածագգեաց և յաշխարհալոյս րաքունապետեն Ներսիսէ. և տհաս խակութեամբ նստայ յաթոռ վարդապետական»**<sup>43</sup>:

Քանի որ հայտնի են Ներսես Մշեցու՝ Վայոց ձորում հաստատվելու և մահվան թվականները՝ 1282 և 1284, ուրեմն Ստեփանոս Օրբելյանը Գլաձորում կրթություն է ստացել տարիների այդ միջակայքում: 1285-ին նա դառնում է Սյունյաց մետրոպոլիտ, 1297-ին իր նստավայր Նորավանքում ավարտին հասցնում «Պատմություն նահանգին Սիսական» կոթողային աշխատությունը՝ հատկապես հանգամանորեն ներկայացնելով եկեղեցական պատմությունը: Տարօրինակ է սակայն, որ իր երկի մեջ Սյունիքի մեծաթիվ վանքերի շարքում Ստեփանոս Օրբելյանը ոչ մի անգամ չի տալիս Աղբերց վանքի կամ Գլաձորի անունը: Սա անկասկած պատահական վրիպում չէ, այլ միտումնավոր քայլ, որի ստույգ պատճառն այսօր անհնար է իմանալ: Կարելի է միայն ենթադրել, օրինակ, որ մետրոպոլիտի և րաքունապետ Եսայի Նչեցու անձնական հարաբերությունները, պատմության շարադրման ժամանակ, այնքան էլ լավ չեն եղել, կամ, որ պատմիչի այս լռության մեջ դեր է կատարել նրա անբարյացակամ վերաբերմունքը Պռոշյանների նկատմամբ և, կամ, Աղբերց վանքը պատմիչի երկում նշված է այլ անվան տակ: Ի դեպ միջտոհմական հակասությունների բարդության ու զգալի լռության պատճառ էր լինել դեռևս Ստեփանոս Օրբելյանի կենդանության օրոք (մահացել է 1303-ին) նրա աթոռակիցը դարձած Տովհաննես Օրբելը: Վերջինս Սմբատ և Տարսայի Օրբելյանների Իվանե եղբոր որդի Լիպարիտի որդին էր (այսինքն՝ Ստեփանոս Օրբելյանի հորեղբոր թոռը), բայց նաև

կապ ուներ Պռոշյանների հետ, քանի որ նրա

43 Ստեփանոս Օրբելյան, *Նշվ. աշխ.,* էջ 478:

մայրը՝ Նանան, և այդ ժամանակ Պոռշյանների տոհմապետ Էաչիի (1299-1317) մայր Թաները, քույրեր էին<sup>44</sup>:

Նովհաննես Օրբելը 1300թ. իր իսկ ձեռքով հիշատակարան է գրել մի Ավետարանում (Նոր Զուղա, ձեռ. թիվ 35), համաձայն որի, այդ ժամանակ նա ուսանում էր Գլաձորում Եսայի Նչեցու մոտ. **«Ես նուստտ Աւրպէլ Իովանէ իմով ձեռամբ գրեցի զյիշատակարանս** զծովացեալն իմաստիք աստուածաշունչ տառիք հընով եւ նորովք եւ արտաքին իմաստիցն, տեղեկութեամբ **զիմն վարժապետ, զհռչակաւորն յամենայն ազգս հայկազեանց զմեծ պետն Եսայի, զարժանին ամենայն բարեաց յիշատակի** յիշեցէք բարեյիշատակաւ ի Տէր, ո՛վ պատահողք»<sup>45</sup>:

Եսայի Նչեցին իր հերթին 1323թ. հիշատակարանում դրվատանքով է խոսում Նովհաննես Օրբելի մասին, նրան կոչելով «սիրելի որդի»<sup>46</sup>: Նա, ինչպես և իր հաջորդ մետրոպոլիտ Ստեփանոս Տարսայիճը, նյութական մեծ օգնություն են ցույց տվել Գլաձորի համալսարանին: Դա երևում է Եսայի Նչեցու նույն հիշատակարանի հետևյալ խոսքերից. «... **յորոց (Նովհաննես Օրբելից և Ստեփանոս Տարսայիճից – Տ.Մ.) եւ մեք**

**բազում գութս եւ խնամս տեսաք եւ վայելեցաք ի սոցանէ ...**»<sup>47</sup>: Բայց նույն հիշատակարանում Եսայի Նչեցին անդրադառնում է նաև Օրբելյան իշխաններին՝ «մեծ իշխանաց իշխանին և յաղթող սպայապետին Բուրթելին», նրա կնոջը՝ Վախախին, և նրա երկու զավակներին, ավելացնելով՝ «որք են յարանց եւ ի կանանց ազգ ընտրեալ և գովեալ ..., որք ի հասարակախնամ բարեաց սոցա ընդ ամենեսեան **եւ մեք մեր աշակերտաւք բազում եւ անթիւ զգութս բարեաց գտաք ի սոցանէ, որ զաւրութիւնս մեր ժողուեցին, եւ ընկալան զմեզ ոչ իբրեւ զաւտար, այլ իբրեւ յինքեանց հաւազատ ծնեալ մանկունս, զթով եւ սիրով զմեր ստահակութիւնս ընկալան**»<sup>48</sup>:

44 Տե՛ս ժԳ դարի հիշատակարաններ, էջ 859:

45 Նույն տեղում:

46 «Դարձեալ յեռեալ հիսեացի ընդ յիշատակեալս ամենայն բարի յիշման արժանաւորն, արհիական վերատեսուչ այսմ նահանգի, որ է ավն սորին ըստ մարմնոյ, վարժն յիմաստս... տէր Յովհաննէս մակարանու Աւրպէլ, մետրապալիտ եւ այցելու Սիւնեաց երկրոտասան գաւազանաց՝ մանաւանդ իմաստութեամբ եւ ուղղափառութեամբ՝ ամենայն աշխարհի, որ է մեր սիրելի որդի ըստ փրկագործ երկանց բանին ծննդեան» (ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 183):

47 ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 183:

48 ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 182: Օրբելյանների և Գլաձորի համալսարանի գործակցության մասին տե՛ս Ա. Սկրտչյան, էջեր Սյունյաց աթոռի պատմությունից, Ս. Էջմիածին, 1995, էջ 65-76, ➔

Ստեփանոս Տարսայիհի՝ Գլաձորում ուսանելու մասին նշվում է 1314թ. գրված երկու հիշատակարանում: Առաջինում Պողոս Կիլիկեցի վարդապետը հանգամանորեն անդրադառնում է Ստեփանոս Տարսայիհի՝ Գլաձորում Եսայի Նչեցուց ստացած կրթությանը<sup>49</sup>: Իսկ Մխիթար Երզնկացին իր հիշատակարանում խնդրում է հիշել.

«Նաեւ կարեկից մեծագարմին  
Աթոռակալ Տարսայիհիս,  
**Որ է մեզ կարեկից յամէն քարիս,**  
**Եւ օժանդակ յիւր գաւառիս,**  
Յիշման առնել զսա արժանիս  
Ծնողիւք, եղբարքք օրհնեալ յաստիս ...»<sup>50</sup>:

Այսպիսով, Օրբելյան իշխաններն ու իշխանագուն հոգևորականները մեծապես օժանդակել են համալսարանի գործունեությանը:

Առաջին հիշատակությանը Խաղբակյանների մասին հանդիպում ենք 1318 թվականին, այսինքն, Գլաձորի հինադրման 36-րդ տարում, գրիչ Սարգսի «Ոսկեփորիկի» հիշատակարանում, որտեղ գրված է. «...»

Եւ եղեւ կատարումն գրոցս ի թվ ՉԿԷ (1318), ի գաւառիս Վայոց ձորոյ, յանապատս Գլաձոր, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի, և մեծ վարդապետի և անյալսք հռետորի՝ Եսայեայ, ...**յիշխանութեան գաւառիս Ամիր Տասանայ, որդոյ Էաչէ, որդոյ Ամիր Տասանայ, որդոյ Պոօշայ քարեպաշտի**, զոր տէր Յիսուս տացէ նոցա ողորմութիւն, և զկենդանիքս պահեսցէ ընդ ամրածածուկ աշովն իւրով»<sup>51</sup>:

Գրիչ Նունանի 1334թ. գլաձորյան հիշատակարանը հստակեցնում է իրերի վիճակը՝ «...**ի յիշխանութեան և տէրութեան համօրէն գաւառս մեծ իշխանիս Բուրթլի, և որդոց նորին՝ Պէշգենի և Բուսնէի, իսկ ի տեղոյս տէրութեան՝ քոռանց մեծին Պոռ-**

→ 4. Մաթեոսեան, Դրուագներ  
Նորավանքի եպիսկոպոսական աթոռի  
պատմութիւնից (Արատես եւ Վերին  
Նորավանք), «Նորավանք» տարեգիրք, Բ,  
Մոնրեալ-Երեւան, 2001, էջ 64-69:

49 «Տուեալ վանծն ի կրթութիւն գրոց,  
եւ աստուածային աւրինացն... նաեւ  
յիմաստասիրական արհեստս յոլով  
ժամանակս դեգերեալ ընդ թեաւք խնամոց  
սուրբ եւ երանաշնորհ ռաբունապետին  
եւ տիեպերալոյս վարդապետին Եսայեայ,  
նաեւ աստիճանի սարկաւագութեան  
եւ քահանայութեան արժանացեալ...»  
(ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 99):  
Երիտասարդ իշխանակուն հոգևորականը  
Գլաձորում օգտակար է եղել Պողոս  
Կիլիկեցուն, որը նրա հրամանով  
ընդօրինակել է վերը նշված մատյանը:

50 ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 104:

51 Նույն տեղում, էջ 136:

**շայ՝ Ամիր Տասանայ և Ջումայի»<sup>52</sup>**: Այսինքն՝ գավառների ընդհանուր իշխանությունն ու տերությունը Օրբելյաններին էր պատկանում, իսկ տեղի (Գլաձորի) տերությունը՝ Պոռշի թոռներին՝ Պոռշյաններին:

Իր դիտողականությամբ մեզ արդեն հայտնի Առաքել Տաղբատեցին (որն իր ստացած ձեռագրի մասին նշում էր՝ «ընդ հովանեաւ Սուրբ Նախավկային եւ Սուրբ Գրիգորիս»), շատ հետաքրքիր կերպով է ներկայացնում գլաձորյան իրավիճակը: 1328թ. իր երկար հիշատակարանի սկզբում նախ փառաբանում է Ստեփանոս Տարսային Օրբելյան մետրոպոլիտին ու նաև խոսում իրենց (գլաձորցիների) նկատմամբ տարած խնամքի մասին՝ **«եւ մեք իսկ ականատես եղաք եւ վայել եցաք ի բազում խնամոց նորին»**, ապա մեծարանքների շարք Բուրթել Օրբելյան իշխանի ու նրա որդիների հասցեին, որից հետո կրկին նշում է Գլաձորի նկատմամբ հովանավորչական վերաբերմունքը՝ **«որ եւ զմեզ ընկալան բազում խնամովք եւ գթով»**, այնուհետև հիշատակում է **«Խաղբակեանցն Պոռշայ»** ժառանգներին և գրում. **«որք են տէր եւ իշխեցող սուրբ մենաստանիս եւ տանս դպրոցականի ժողովոց»<sup>53</sup>**:

Տիմա կարծես թե պատկերը պարզ է. Օրբելյանները հովանավորել են Գլաձորի համալսարանը, բայց այն գտնվել է անմիջականորեն Պոռշյաններին պատկանող հողատարածքում (նրանց «տերության» ներքո):

Այստեղ մի դիտարկում պիտի կատարենք Օրբելյաններին և Պոռշյաններին պատկանած տարածքների վերաբերյալ մինչև այժմ եղած մի թյուր պատկերացման մասին: Բանն այն է, որ ուսումնասիրողները փորձել են սահման գծել այդ տարածքների միջև, մինչդեռ այդպիսի անջրպետող սահման իրականում գոյություն չի ունեցել: Վայոց ձորի ամեն մի բնակավայր, գյուղ կամ վանք ունեցել է իր բնական հողատարածքների սահմանը: Նշված ժամանակաշրջանում, երբ սովորական բան էր որևէ գյուղ գնելը, այս կամ այն վանքին նվիրելը, ստացվել է այնպես, որ տարբեր տերերի պատկանող բնակավայրերը խառը դասավորություն

են ստացել: Մի բնակավայր (կամ վանք) կառուցվել էր պատկանել Օրբելյաններին, հաջորդը՝ Պոռշյաններին, նրանից հետո եկողը դարձյալ Օրբելյաններին, կամ նրանց որևէ ստորակա

52 ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 261:

53 Ղ. Փիրոպեմեան, նույն տեղում (Սատենադարան, ծեռ. 4515, էջ 81-85), Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 173:

իշխանի, և այսպես շարունակ: Այս իշխանական տների տարածքների միջև այժմյան ընկալմամբ սահման գծելու փորձերը կամ ձախողվել են, կամ հանգեցրել զավեշտական պատկերի, ինչպես որ այդ տեսնում ենք մի լուրջ հրատարակության մեջ՝ «Նայաստանի ազգային ատլասում», որտեղ Պոռոշյանների կարծեցյալ տարածքում է հայտնվել Օրբելյան իշխանների հանրահայտ նստավայր Եղեգիսը<sup>54</sup>:

Վերը շարադրվածից հետևում է, որ Աղբերց վանք-Գլաձորը պատկանել է Պոռոշյաններին, քիչ հեռու գտնվող Ներմոնի վանքը, ինչպես հայտնի է, Օրբելյաններինն էր: Վերջիններս, սակայն, հավանաբար չեն զլացել Ներմոնը հատկացնելու համալսարանի ուսումնական նպատակներին. չէ՞ որ իրենց իշխանագուն հոգևորականներն էլ այնտեղ էին ուսանում: Նաև այս իրողությամբ կարելի է բացատրել այն, որ երբ Եսայի Նչեցու մահից հետո նոր բարոնապետ Տիրատուր Կիլիկեցին ուսանողության հետ վերջնականապես տեղափոխվեց Ներմոն, տեղի ձեռագրերի հիշատակարաններում այլևս չհիշատակվեց Գլաձորը: Նամասարանի՝ Ներմոնում հաստատվելու ժամանակ՝ 1338թ., այստեղ գրված առաջին իսկ ձեռագրում (Երուսաղեմ, ձեռ. 1328) գրիչը շեշտում է տեղի ինչպես **իշխանության**, այնպես էլ **տերության** պատկանելությունն Օրբելյաններին. «... ի նահանգիս Վայո Ձոր, ի վանս Ներմոնի, ընդ հովանեաւ Սրբոյն Գրիգորի... **ի իշխանութեան եւ տէրութեան տեղոյս՝ մեծ եւ քարեպաշտ իշխանին Բուրթելի**, եւ զաւակաց նորին՝ Պեշգենի եւ Իւանի: Եւ ի վարժապետութեան ընդհանուր Նայկազեանս սեռի, երջանիկի մեծի եւ երիցս երանեալ հռետորի **Տիրատուր** առձայնելոյ, առ որ կամք դեգերեալ ի վարժս կրթութեան»<sup>55</sup>:

**Այսպիսով, Աղբերց վանք-Գլաձորը հիմնվել է Պոռոշյաններին պատկանող տարածքում, բայց մեծապես հովանավորվել է նաև Օրբելյան իշխանների ու նույն տոհմից սերող հոգևոր առաջնորդների՝ Սյունյաց մետրոպոլիտների կողմից:**

54 Չայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երևան, 2008, քարտեզ 44:

55 Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 7, Երուսաղեմ, 1969, էջ 592:

# Ներմոնի վանքի մոտ գտնվող Պռոշյանների վանք՝ Քարեվան կամ Քարի վանք

**«Ես դարձն Նայրուտս,  
չինեցի զաղօթանոցներ  
սուրբ մենաստանացս՝  
զՔարի վանուցս,  
զԹանահատի վանուց եւ  
զսուրբ Կաթողիկէիս...»:  
1335 թ. հիշատակարանից**

**Ո**ւսումնասիրողների մոտ երկմտանք  
չկա Ներմոնի վանքի հովանավոր-  
ների հարցում, քանի որ առկա պատմական  
տեղեկություններում հիշվում են միայն Օր-  
բելյանները: Մեր ուսումնասիրության տվյալ-  
ները քերում են այն համոզման, որ Աղբերց  
վանքը պետք է գտնված լինի Ներմոնի վան-  
քից ոչ հեռու: Քանի որ որպես Գլաձորի «տե-  
ղի տերեր» հիշվում են Պռոշյանները, մի՞թե  
հնարավոր է, որ Ներմոնի վանքի մոտ մի այդ-  
պիսի վանք եղած լինի:

Տեղանքի ուսումնասիրությունը ցույց է  
տալիս, որ այդպիսի վանք կա Ներմոնից հյու-  
սիս-արևմուտք, որն այլ աղբյուրներից հայտ-  
նի Քարեվանն է, կամ Քարի վանքը<sup>56</sup>: Մեր  
կարծիքով միանգամայն հնարավոր է, որ Աղ-  
բերց վանք – Գլաձորը եղած լինի հենց, այս-  
պես կոչված, Քարեվան - Քարի վանքը: Որ  
այն գտնվել է Պռոշյանների հովանու ներքո,  
երևում է այս իշխանների ստորակա Նայրու-  
տի 1335թ. մի հիշատակարանից (այս մասին՝  
քիչ հետո):

**Օսանոթանանք Քարեվանի վերաբեր-  
յալ առկա տվյալներին:**

56 ԴՅ Վայոց ձորի մարզի  
պատմության և մշակույթի անշարժ  
հուշարձանների պետական ցուցակում  
(ԴՅ Կառավարության 2003 թ. թիվ 754-Ն  
որոշման մեջ) «Եղեգիս գյուղ» մասում,  
ամենավերջում նշված է «ՎԱՆՎԱՆ  
ՀԱՄԱԼԻՐ ՔԱՐԵՎԱՆՔ, 9-10-րդ դդ., 3կմ հս-  
աե., Եղեգիսի կիրճում, Դերմոնի վանքից  
հս. բարձր ժայռի գագաթին»:






Յերմոնի վանքը և նրանից հյուսիս-արևմուտք՝ Քարեվանը:

Ստեփանոս Օրբելյանն իր պատմության մեջ գրում է, որ Եղեգիսի կիրճում գտնվող այս վայրը հզնավորների բնակատեղի է եղել: 936թ. Սյունյաց Սմբատ իշխանը որսի դուրս գալով **«ի վերոյ Եղեգեաց ի ձորն, բարձրահայեցիկ ի վերայ գետոյն, որոց տեղիքն Քարեվանս կոչիւր»**<sup>57</sup>, հանդիպում է ժայռերի ծերպերում ապրող խոտանարակ հզնավորների, որոնց հետ զրույցից ու նրանց խեղճ վիճակից ազդված Սյունյաց Տակոբ եպիսկոպոսին հանձնարարում է մի վանք կառուցել այդ մարդկանց համար: Սյունյաց եպիսկոպոսը հանդիպում է Քարեվանում բնակվողների հետ, հարցնում նրանց ցանկությունը, իսկ վերջիններս վանքի հիմնադրման համար ցույց են տալիս իրենց բնակված տեղից ներքև գտնվող մի տափարակ տեղ, որտեղ էլ կառուցվում է նոր վանքի Ս. Գրիգոր եկեղեցին:

<sup>57</sup> Ստեփանոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, էջ 259:



Քարեվանի ճգնարանները:

58 Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն  
Մահանգին Սիսական, էջ 259:

59 Նույն տեղում, էջ 260: Անդրադառնալով  
վանքի անվանը՝ Ստեփանոս Օրբելեանը  
գրում է, որ ճգնավորներից ավագագույնը  
Ահերմոն անունն էր կրում և հենց նրա  
անունով էլ «կոչեն վտեղին յանուն ծերոյն՝  
Ահերմոնի վանք»: Ստեփանոս Օրբելեանը  
վանքի անունը տալիս է ևս մեկ անգամ,  
Սյունյաց վանքերը թվարկելիս. «Յերմոնի  
վանք» (նույն տեղում, էջ 340): Ավելացնենք, որ  
«Յերմոն փոքր սարը» երկիցս հիշատակվում  
է Սաղմոսներում, և Յրաջա Աճառյանի  
կարծիքով՝ վանքի անունը կապվում է հենց  
այդ սուրբգրային անվան հետ (Դ. Աճառյան,  
Հայոց անձնանունների բառարան, հ. Ա,  
Երևան, 1942, էջ 92, Ա. Գևորգյան, Վայոց ձորի  
և Որոտանի մանրանկարչությունը XIII-XVII  
դդ., Երևան, 2003, էջ 32) :

«Եւ նորա (Նակոբ Եպիսկոպոսը – Տ.Մ.) եկե-  
ալ առ սուրբ հարսն հարցանէ զկանս նոցա, և  
**նոքա ցուցանեն տեղի մի տափարակ ի ներ-  
քոյ քարոյն ուղղորդ ի վայր**, յորում տեղուջ  
սկիզբն առնէ կոփածոյ քարամբք և շինէ եկե-  
ղեցի գմբէայարկ յանուն սրբոյն Գրիգորի»<sup>58</sup>:  
Իշխանի բարեպաշտ տիկին Սուփին էլ գնում է  
այս նոր վանքի դիմաց գտնվող Նավու գյու-  
ղը, նաև Եղեգիսում գտնվող այգի ու ծաղկոց է  
տալիս «ի ժառանգութիւն եկեղեցւոյն»<sup>59</sup>:

Իսկ ի՞նչ եղավ Քարեվանի տարածքը  
հետագայում (նկատենք, որ Ստեփանոս Օր-




բելլանն այն վանք չի կոչում, այլ՝ «տեղիքն (որ) Քարեվանս կոչիւր»), և ո՞ւմ էր այն պատկանում:

Այստեղ պահպանվել են շինությունների ավերակներ, որոնց ճար-

60 Հինգ տողանոց արձանագրությամբ քարը նախկինում կիսով չափ հողի մեջ էր թաղված և շուրջ 10 տարի առաջ, ըստ իր հավաստման, այն դուրս է բերել հնագետ Յուսիկ Մելքոնյանը, վերձանել տեքստը, սակայն չի հրատարակել (այս մասին մեզ տեղեկացրել է Կ. Սաթևոսյանը): Մենք վերծ ենք մնում արձանագրության մեր ընթերցումը ներկայացնելուց, սպասելով որ այն հրատարակի առաջին վերձանողը՝ հարգարժան Դ. Մելքոնյանը: Լշենք միայն, որ արձանագրության 3-րդ տողի առաջին բառին՝ ԴՈՂՆ, հաջորդում է ԳԼ սկզբնատառերով անվանում, սակայն շարունակությունը հստակ չէ, և նույն կերպ, բառասկզբում ԳԼ տառեր երևում են նաև վերջին տողի միջնամասում:

տարապետական մանրամասները՝ դռան բարավոր, սյան խարիսխ և այլն, ակներևորեն 13-14-րդ դարերի ոճն ունեն: Մի մեծաքեկոր քարի վրա պահպանվել է նաև նվիրատվական արձանագրություն՝ գրված պարոն Հայրուտի անունից՝ 1322 թվականին<sup>60</sup>: Ցավոք, արձանագրությունը միջնամասում խիստ հողմնահարված է և տեղանուն չի կարդացվում: Սակայն նույն Հայրուտը 1335թ. մի հիշատակարան է թողել (Ղ. Փիրդալեմյանից օգտվելով այն հրատարակել է Գ. Հովսեփյանը), որտեղ նշում է երեք վանքերում աղոթանոցներ կառու-

1322թ. արձանագրությունը:




ցելու մասին (թերևս նկատի ունի մատուռներ). «**Ես պարոն Հայրուստ, շինեցի զաղօթանոցներ սուրբ մենաստանացս՝ զՔարի վանուցս, զԹանահատի վանուց եւ զսուրբ Կաթողիկէիս, զի այն էր խնդրուածք իմ յԱստուծոյ...**»<sup>61</sup>:

Դժվարանում ենք ասել, թե այստեղ նշված Կաթողիկէն որ եկեղեցին է (հավանաբար Սպիտակավոր Ս. Աստվածածինն է), սակայն Թանահատը Պռոշյաններին պատկանած վանքերից էր: Ուրեմն միանգամայն հավանական է, որ Հայրուստը, որի մասին այլ տեղեկություններ չկան, հայտնի չեն, Պռոշյանների ստորակա իշխաններից էր և իր պարոնների (գերականների) վանքերում զբաղվել է եկեղեցաշէն գործունեությամբ: Ըստ այդմ **Քարի վանքը գտնվել է Պռոշյաններին պատկանած տարածքում, Եղեգյաց ձորում, որից քիչ հեռու Օրբելյանների հովանավորած Տերմոնի վանքն էր:**

61 Շարունակության մեջ ասվում է. «եւ զնեցի ի Սապուխի որդոյ Սահմատայ Վճորի յեկր ձիթհանքն՝ Սուրբ Կաթողիկէիս լուսացու եւ ետու ի ձեռն Իբրանոս քահանային (այստեղ հիշատակարանն արտագրող Դ. Փիրղալեմյանը փակագծում ծանոթագրում է, որ վերջինս այդ ձեռագրի՝ Ճաշոցի ստացողն էր) վասն փրկութեան հոգւոյ իմոյ եւ արեւշատութեան պաւակաց իմոց: Ես Առաքել վարդապետս միջնորդ եւ վկայ եմ եւ հաստատ եւ անդարձ վախճից, ի թուաբերութեանս Չայկապեան տումարի 227 (1335)»: Տե՛ս Դ. Փիրղալեմեան, Լշխարք պատմութեան Չայոց, հ. Բ (Մատենադարան, ձեռ. 4515, էջ 94-95): Գ. Չովսեփյանի հրատարակության մեջ Փիրղալեմյանի բերած բնագրից որոշ շեղումներ կան՝ «Ես պարոն Հայրուստ, որ շինեցի պաղօթանոցս մեր սուրբ մենաստանացս...» (Գ. Յովսեփեան, Խաղրակեանք, էջ 60, 349):

## Դիսարկումներ Քարի վանքում

Այս վանքի տեղագրությունը հետևյալն է. գտնվում է Եղեգիսի խորանդունդ, գեղատեսիլ ձորի (Եղեգիսը այստեղ հոսում է 1614 մ ծովի մակարդակից բարձր) աջափնյա (մոտավորապես 45 աստիճան թեքությամբ) սարալանջին՝ գետից 479 մետր բարձրության վրա վեհացող չորս հզոր ժայ-





ռազանգվածներից ձախից նախավերջինի վերին հարթակի վրա՝ Տերմոնից հյուսիս-արևմուտք:

Տերմոնի և Քարեվան - Քարի վանքի միջև հեռավորությունն ուղիղ գծով շուրջ 450 մետր է (ոտքի ոլորապտույտ հանապարհով՝ մոտավորապես 1000 մետր): Տեղի աշխարհագրական GPS կոորդինատներն են՝ լայնություն՝ 39 52 41.6 N, երկայնություն՝ 45 23 48.9 E, բարձրություն՝ 2091.80 մ:

Նշենք, որ այդ տեղանքում մենք եղել ենք շուրջ քառորդ դար առաջ, երբ այն համեմատաբար քիչ էր ծածկված բուսականությամբ, քանի որ մոտակա գյուղերի բնակիչներն այդտեղ ոչխար էին արածեցնում: Այն ժամանակ ավելի հստակ էին երևում համալիրի ավերակները: Այժմ այն փարթամ թփերով, մացառներով ծածկված ու բարձր խոտի մեջ կորած տեղանք է ներկայացնում:

2015-ի հունիսի 20-ին հաղթահարելով մացառապատ հանապարհը՝ մենք հասանք ավերակներին, որոնք գտնվում են Տերմոնի վանքից վեր երևացող չորս հզոր ժայռազանգվածներից ձախից երկրորդի վերին հարթության վրա: Այստեղ այժմ դեռևս տեսանելի հետքերը թույլ են տալիս խոսելու երեք շինության մասին: Հիմնական եկեղեցին կառուցված է ժայռի եզրին, մոտավորապես 7×5 մ չափերով: Դատելով ամենուր ընկած սրբատաշ քարերից և որոշ մանրամասներից՝ այն գմբեավոր է եղել: Եկեղեցուն կից՝ նրա արևմտյան պատի աջ և ձախ կողմերում կան նույնպես հիմնովին ավերված երկու օժանդակ կառույցների հետքեր: Այս երկու սենյակներից կամ մատուռներից հյուսիսայինն ավելի փոքր է, (մոտավորապես 4×4 մ), հարավայինը՝ ավելի մեծ: Շինությունների մոտ պահպանվել է պարոն Տայրուտի 1322թ. արձանագրությունը, որի մասին նշվեց վերևում:

Եկեղեցու գլխավոր մուտքի դիմաց միջանցք հիշեցնող նախասրահ է, որի մեջ են բացվում նշված երեք կառույցների մուտքերը: Նախասրահը շարունակվում է և հարավային սենյակի մոտից թեքվում հարավ-արևելք՝ վերջանալով ժայռից մոտ 1,5-2 մ հեռավորության վրա: Այս մասում ամենայն հավանականությամբ, եղել է լուսամուտ, որտեղից հստակ երևում է Տերմոնը:






Հնավայրի հատվածներ:



Վանքի արևելյան պատի մնացորդների մոտից, քացվում է մի հրաշալի պատկեր. հարավ-արևելյան կողմից Տերմոնի վանքը կարծես ափի մեջ լինի, հարավում խոր ձորն է՝ Եղեգյաց կոչված, որով հոսում է Արփայի վտակ Եղեգիսը:

Շինություններից քիչ հեռու նախկինում մենք նկատել էինք գերեզմանաքարեր, որոնք ամբողջովին թաղված էին հողի մեջ՝ միայն վերին հարթություններն էին հազիվ նկատվում: Այս անգամ մեր դիտարկումները ցույց տվեցին, որ ցավոք, հողի շերտը և փարթամ բուսականությունը դրանց հետքերը ծածկել են: Վստահաբար մոտերքում եղել են նաև այլ շինություններ, սակայն, ինչպես նշվեց, տարածքը ծածկված է խիտ բուսականությամբ, և դժվար է դրանց հետքերը տեսնել:





## Քարի վանքի և Աղբերց վանքի ընդհանրություններ


**Տ**եղագրական առումով Քարի վանքն ու Աղբերց վանքը մի շարք ընդհանրություններ ունեն, սակայն դրանք ներկայացնելուց առաջ փորձենք պարզել, թե արդյո՞ք հնարավոր էր վանքի անվանափոխությունը համալսարանի գործունեության շրջանում: Եվ անմիջապես առաջանում է երկրորդ հարցը՝ արդյո՞ք Գլաձորի վանքի տեղի որոնումների անարդյունք լինելու պատճառներից մեկն էլ այն չէ, որ այդ վանքն ունեցել է նաև մեկ այլ անուն:

Ինչպե՞ս կարող էր տեղի ունենալ վանքի անվանափոխությունը: Նամարձակ ենթադրություն պիտի անենք, քայց անհնար չենք համարում, որ երբ Ներսես Մշեցին իր աշակերտներով եկել է Վայոց Ձոր և Պռոշ իշխանից կեցության տեղ ստացել այս վանքը, որն այդ ժամանակ թերևս լքված մի տեղ էր, Քարի վանք անվան փոխարեն, որի ծագումը պայմանավորված էր տեղանքում հսկա քարաժայռերի առկայությամբ, նախընտրել է այն կոչել Աղբյուրների վանք՝ **Աղբերց վանք**, դարձյալ տեղանքի՝ աղբյուրառատ լինելու հիմնավորմամբ, որը նաև խորհուրդ ուներ, քանի որ նրա հիմնած վարժարանը իմաստու-



թյան աղբյուր պիտի դառնար ողջ երկրի համար: Նկատենք, որ խոսքը եկեղեցու անվանափոխությանը չի վերաբերում, որն անհնար կլիներ, այլ վանքի, ըստ էության՝ տեղանվան:

Այն, որ Աղբերց վանք անունը հնավանդ չէր, այլ նորահնար, եր-



Վանքն առատափոս աղբյուրների մոտ է:

62 Լ. Խաչերյանն իր գրքում թեպետ մի ենթավերնագիր վերնագրել է. «Աղբերց վանքի Գլածոր անվանակոչումը Մուշի համանուն վանքից», որտեղ 10 էջ գրում է այդ մասին, բայց ոչ մի սկզբնաղբյուր չի հիշատակում, որտեղ Մշո Առաքելոց վանքը կոչված լինի Գլածոր: Լ. Խաչերեան, Եսայի Նչեցին եւ Գլածորի համալսարանը, Լոս Անճիլես, 1988, էջ 109-119:

կում է այն բանից, որ Ներսես Մշեցու մահից շատ չանցած այն աստիճանաբար մոռացվեց, իր տեղը զիջելով Գլածորին<sup>62</sup>, որը 1291-ին հիշվում է որպես Աղբերց վանքի մականուն, իսկ Ժամանակի ընթացքում Աղբերց վանք անունն ընդհանրապես դուրս է մղվում (վերջին հիշատակությունը, զգալի դադարից հետո, հանդիպում է Առաքել Նաղ-

քատեցու 1327թ. հիշատակարանում): Պատահական չէ նաև, որ Սյունյաց վանքերը բարեխղճորեն հիշատակող Ստեփանոս Օրբելյանն էլ չի տալիս ոչ Աղբերց վանք, ոչ էլ Գլաձոր անունները, գուցե նաև այն պատճառով, որ այդ տեղի անունը նա նշել էր որպես Քարեվան:

Ինչպես երևում է Ներսես Մշեցին ու Գլաձորի համալսարանի մյուս հիմնադիրներն այս նորահիմն ուսումնավայրի վրա ուշադրություն հրավիրելու մեծ ձգտում են ունեցել, և պատահական չէ, որ հիմնումից ընդամենը երկու տարի հետո գրված առաջին իսկ հիշատակարանում, որտեղ նշված է ստույգ գրչության վայրը՝ Աղբերց վանքը (1284թ., ձեռագրի ստացողն է Բաբունապետ Ներսես Մշեցին), այն նաև փառաբանվում է «**երկրորդ Աթենս պանծալի**» բառերով, մի բնորոշում, որ հետո անցնում է այլ հիշատակարանների: Կարելի է ասել, որ այս ձևակերպումը նույնպես գլաձորյան փառաբանական անվանադրման նոր և ուշագրավ օրինակ է:

Այսինքն, բոլորովին չի բացառվում, որ հենց Գլաձորի հիմնադիրները, որ այն ժամանակի մտավոր ամենաբարձր հատկանիշների կրողներն էին, նորահիմն ուսումնական կենտրոնի շոնդալից սկզբնավորման նպատակով հղացած լինեն այն նոր անվամբ մկրտելու գաղափարը՝

**«Ի յԱղբերց վանս մենաստանի,**

**Յերկրորդ Աթենս պանծալի»<sup>63</sup>:**

Թվում է, որ այդ նույն քարոզչական նպատակն է հետապնդում նաև այս կենտրոնի՝ Ստեփանոս Սյունեցու գերեզմանին մոտ գտնվելու մասին նշումը (որը Վայոց ձոր գավառում էր):

Այսպիսով, մենք հնարավոր ենք համարում, որ համալսարանի հիմնադիրները իրենց հատկացված վանքին, տվյալ դեպքում Քարեվան - Քարի վանքին նոր անուն տված լինեն, այն կոչելով Աղբերց վանք: Միևնույն ժամանակ, պետք է կարծել, որ Քարեվան կամ Քարի վանք հնավանդ անունն էլ մոռացության չի տրվել տեղի բնակչության շրջա-

նում, այդ պատճառով 1335-ի իր հիշատակարանում Տայրուտն այն հենց այդ անունով է կոչում Քարի վանք:

63 ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 552 (Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի թիվ 571 ձեռագիրն է, որտեղ նաև երկու կիսախորան է նկարել համալսարանի սան Սոմիկը):



**Ի՞նչ փաստարկներ կան Քարի վանքն ու Աղբերց վանքը նույնացնելու համար:**

Առաջինն այս վանքի՝ Ներմոնի վանքին շատ մոտ գտնվելն է, քանի որ, ինչպես վերը տեսանք, հիշատակարանները խոսում են այդ մերձավորության մասին:

Երկրորդ, չնայած վանքերի նման մերձությանը՝ Քարի վանքի տարածքը պատկանել է Պռոշյաններին (ինչպես որ Աղբերց վանքը), Ներմոնի վանքինը՝ Օրբելյաններին:

Երրորդը տեղագրական ընդհանրություններն են: Ստեփանոս Օրբելյանը Քարեվանը բնութագրում է՝ **«ի վերոյ Եղեգեաց ի ձորն, բարձրահայեցիկ ի վերայ գետոյն»**<sup>64</sup>: Գլաձորը նույնպես Եղեգիսի ձորում է,

իսկ Գրիգոր գրչի 1335թ. հիշատակարանում բնորոշում է որպես **«բարձրադիտակ»** մենաստանիս Գլա-

64 Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 259:

Վանքի «բարձրադիտակ» դիրքը:





Վանքի «բարձրադիտակ» դիրքը:

ձոր»։ Ըստ էության, «**բարձրահայեցիկն**» ու «**բարձրադիտակը**» ոչ միայն նույնիմաստ են, այլև նույնական։

Չորրորդը բնական միջավայրի նմանությունն է։ Քարի վանքի թիկունքի ժայռերի աջ ու ձախ կողմերից առատ աղբյուրներ են բխում, այսինքն, այն լիովին համապատասխանում է **Աղբերց վանք** անվանը (բավական է նշել, որ այժմ այդ աղբյուրների առատ ջուրը խողովակներով տարվում է Եղեգնաձոր քաղաք)։ Տեղանվանական մյուս բնութագրումը՝ **Գլաձոր**, նույնպես համապատասխանում է տեղին (ըստ վերը բերված ստուգաբանության), քանի որ վանքի բարձրադիր հարթակը կարծես ուր որ է գլորվելու է ձորը։


Վերևում Քարեվանի նկարագրության մեջ տեսանք, որ այնտեղ կենտրոնում համեմատաբար մեծ եկեղեցին է, որի երկու կողքերում փոքր մատուռներ։ 1318թ. Գլաձորում նկարագարդած Աստվածաշնչի



խորաններից մեկի լուսանցքում (Մատենադարան, ձեռ. 206, քերթ 437 ք) Թորոս Տարոնացին պատկերել է Եսայի Նչեցուն, որի գլխավերևում երևում են եկեղեցական երեք գմբեթներ, կենտրոնում մեծ և կողքերին՝ երկու փոքր: Իհարկե, սա եկեղեցու խորհրդանշական պատկեր է, բայց չի բացառվում նաև, որ Աղբերց վանքի եկեղեցիների ու մատուռների տեղադրության արտացոլումը լինի:

**Այսպիսով**, կարծում ենք, որ Տերմոնի վանքի մոտ գտնվող բարձրահայեցիկ հին Քարեվանի տարածքում գտնվող մենաստանը Աղբերց վանք անունն է ստացել համալսարանի այստեղ հաստատվելու ժամանակ: Այսինքն, **Քարեվանն ու Աղբերց վանքը նույն վայրի տարբեր անուններն են:**

Եսայի Նչեցի, Մատենադարանի N 206 ձեռագրից:







Քարեկան-Արբեղ վանքի՝ հետազոտությունից, Կմբուրի ճակվա-բուխի վրա:



## Ամփոփում և եզրակացություններ

Մեր ուսումնասիրության գլխավոր եզրահանգումներն են՝

**ա. Պատմական, հիշատակարանային վկայությունների համադրումը ցույց է տալիս, որ Աղբերց վանք – Գլաձորը գտնվել է Ներմոնի վանքի մոտ:**

Գլխավոր փաստարկներն են՝ 1319թ. Նովհաննես գրչի հիշատակարանը, որտեղ գրչության վայրի մասին նշվում է. «ի վանս Ներմոնի, ընդ հովանեաւ Սուրբ Գրիգորիս, եւ առ ոտս մեծ հռետորիս Եսայեա[յ]», այսինքն, բաբունապետ Եսայի Նչեցին այդ տեղին շատ մոտ է գտնվել: Իսկ Առաքել Տաղբատեցու 1327-ի հիշատակարանը գրված է «ի վանս Գլաձոր, որ կոչի Աղբերց վանք, ընդ հովանեաւ Սուրբ Նախավկային եւ Սուրբ Գրիգորիս», որտեղ միասին նշվում են Գլաձորի և Ներմոնի գլխավոր եկեղեցիները (Ս. Ստեփանոս և Ս. Գրիգոր): 15-րդ դարի Ներմոնի մի քանի ձեռագրերում կրկին հիշատակվում է Ս. Ստեփանոսը, այս անգամ արդեն «սուրբ բաբունեաց» կամ «սուրբ վարդապետաց» դամբարանների հետ, որոնք պետք է համալսարանի մեծ թաղամասերի տապանները եղած լինեն՝ Գլաձորում և Ներմոնում:

**բ. Ներմոնի վանքին մոտ գտնվող միակ վանքը Քարի վանքն է, որը հավանաբար համալսարանի այստեղ հաստատման ժամանակ վերանվանվել է Աղբերց վանք և հենց սա է Գլաձորի համալսարանի տեղը:**

Գլխավոր փաստարկներն են՝ Քարի վանքի տարածքը պատկանել է Պռոշյաններին (ինչպես որ Աղբերց վանքը), Ներմոնի վանքին՝ Օրբելյաններին: Քարի վանքի և Աղբերց վանքի տեղագրական բնութագրումները համընկնում են (բարձրադիտակ, բարձրահայեցիկ, աղբյուրներով առատ տեղում): Անվանափոխության հնարավորության մասին է խոսում այն, որ Աղբերց վանք անունը հնում չի հիշատակվում, հենց

համալսարանի գործունեության ժամանակ հեշտությամբ տեղը զիջել է Գլաձոր անվանը (այսինքն, այն հին, ավանդական անուն չի եղել), իսկ համալսարանի՝ այս տեղից դուրս գալուց հետո երկու անունն էլ այլևս չեն հիշատակվում:

**գ. Գլաձորի համալսարանը գործել է Աղբերց վանքում, քայց ուսումնական նպատակներին է ծառայել նաև Ներմոնի վանքը:**

Չնայած գրականության մեջ ամենուր նշվում է, թե Եսայի Նչեցու մահից հետո Գլաձորը խափանվեց 1338թ. և նոր լաբունապետ Տիրատուր Կիլիկեցու գլխավորությամբ փոխադրվեց Ներմոնի վանք, սակայն համալսարանը Ներմոն չի «տեղափոխվել», քանի որ այն շատ վաղուց գործել է նաև այստեղ: Գլաձորի հովանավոր իշխանները եղել են Պռոշյանները և Օրբելյանները, սակայն առաջինների աստիճանական թուլացման պատճառով առաջնությունն անցել է վերջիններին, որոնք 1338-ից հետո ամբողջովին ստանձնել են համալսարանի հովանավորությունը՝ այն տեղակայելով միայն Ներմոնի վանքում: Թերևս Պռոշյանների վերնուշը մոռացության տալու համար Աղբերց վանք և Գլաձոր անունները մոռացության են տրվել, սակայն Ներմոնի՝ ավելի ուշ շրջանի ձեռագրերում հիշատակվում է Գլաձորի վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու անունը:

Եթե այս տեսակետը հաստատվի, ապա կարելի կլինի ասել, որ Ներսես Մշեցու 1282 թվականին հիմնադրած համալսարանը նույն վայրում գործել է ոչ թե մինչև 1338թ. (Եսայի Նչեցու մահը), այլ մինչև 1356 թվականը (Տիրատուր Կիլիկեցու մահը), այսինքն **ամբողջ 74 տարի:**

Գլաձորի տեղի վերաբերյալ աղբյուրների քննությանը նվիրված, 1984 թվականի իր հոդվածը Արտաշես Մաթևոսյանը եզրափակել է հետևյալ խոսքերով՝ «Աղբերց-Գլաձոր վանքում թաղված են մեծ լաբունապետներ Ներսես Մշեցին, Եսայի Նչեցին: Նրանց տապանագրերով դամբարաններն էլ Գլաձորի համալսարանի ստույգ տեղը ցույց կտան, որին հնարավոր է հասնել պեղումների միջոցով»:

Մենք համամիտ ենք այս տեսակետին, բայց արդեն նաև մատնանշելով պեղումների որոշակի տեղը՝ Քարի վանքը (Աղբերց վանք): Ինչպես վերը նշվեց, այստեղ առկա են նաև չպեղված ու չուսումնասիրված տապանաքարեր, որոնց ուսումնասիրությունն էլ, մեր կարծիքով, կարող է դառնալ խնդրի հանգուցալուծման բանալին: Առաջարկում ենք պեղումներ կատարել նաև Ներմոնի վանքում, որը Գլաձորի համալսարանի մի մասը լինելով, մինչև այժմ ամբողջական հնագիտական ուսումնասիրության չի ենթարկվել: Միաժամանակ, ցանկալի կլիներ հնագիտական գնության իրականացումը շրջակա ժայռերի ծերպերում, չբացառելով տեղում ձեռագրերի թաքստոցների գոյությունը:



Книга Тиграна Мкртчяна «**Новая версия местоположения Гладзорского университета**» начинается с предисловия редактора, доктора исторических наук Карена Матевосяна. Отмечая важность для арменоведения обнаружения до настоящего времени неизвестного местоположения знаменитого в средневековой Армении Гладзорского университета, он оценивает в книге выдвинутую версию, считая, что в указанном месте проводимые раскопки могут позволить подтвердить или опровергнуть её. Одновременно редактор сообщает некоторые биографические сведения об авторе, представляя, как он начал исследование данной задачи.

Исследование Тиграна Мкртчяна начинается с представления **предыстории вопроса поиска местонахождения Гладзора**, приводятся точки зрения и предположения предыдущих исследователей о местонахождении обители Гладзор. В памятных записях рукописных книг отмечается, что Гладзорский университет был основан в 1282 г. в провинции Вайоц дзор, в обители Ахберц ванк, во имя Святого Степаноса Нахавка (Первомученика Стефана). Монастырь имел и второе название - Гладзор, которое постепенно нашло более широкое применение.

Больше всего распространено мнение, что Гладзор находился вблизи монастыря Танат /Танаат/ (Гевонд Алишан, Гарегин Овсепян), или в самой обители Танат (Ерванд Лалаян, Арам Аветисян, Ашот Абраамян, Игит Гарибян). Эти версии были основательно опровергнуты (Левон Хачерян, Арташес Матевосян). Были и другие мнения. Арташес Матевосян отмечал, что возможное местоположение обители Ахберц ванк следует искать в трёх местах: у монастырей Танат, Спитакавор Сурб Аствацацин, или Гермон (в окрестности церкви Св. Григора). Своё исследование Тигран Мкртчян сконцентрировал именно в этом последнем месте – обители Гермон и окрестностях.

Дальше в книге представляется **географическая среда Гладзорского университета** согласно письменным источникам. В «Ашхарацуйце» (книга о географии средневековой Армении) историка Вардана Аревелци, сообщается, что Гладзор находится в ущелье реки Ехегис. А из памятной записи одной из рукописных книг (1335г.), написанной в Гладзоре, видно, что он находился на возвышенной местности.

Исходя из названия, Ахберц ванк находился в местности, богатой родниками (Ахберц ванк означает «обитель родников»). А название Гладзор Л. Хачерян этимологизировал как «постройка, находящаяся на кромке пропасти, которая, кажется, вот-вот провалится в бездну». Итак, **Гладзор находился в ущелье реки Ехегис, на возвышенной местности, где бьют ключом родники.**

Третий подраздел книги озаглавлен «**Определение местоположения Гладзора вблизи монастыря Гермон**». На нахождение Гладзора вблизи обители Гермон указывает одна памятная запись писца Ованнеса 1319 года, где о месте переписчика указано: «в монастыре Гермон, под покровительством Святого Григора, и у ног великого ритора Есаи», то есть рабунапет (руководитель университета, досл. Начальник учителей) Есаи Нчеци находился очень близко от этого места. А памятная запись Аракела Ахбатеци 1327 года написана «в монастыре Гладзор, который называется Ахберц ванк, под покровительством Сурб Нахавка (Св. Первомученика) и Сурб Григора», где вместе упомянуты главные церкви Гладзора и Гермона (Св. Степанос и Св. Григор). В некоторых Гермонских рукописях XV века вновь упоминается Св. Степанос, на этот раз уже вместе с могилами «Святых рабуни (главных учителей)» или «Святых вардапетов (учителей)», которые должны быть гробницами великих руководителей университета.

По мнению автора, университет располагался в Ахберц ванк – Гладзоре, однако учебному процессу служил и монастырь Гермон, своей обширной территорией и подсобными, вспомогательными постройками.

В следующем подразделе книги – «**О вопросе покровителей Гладзорского университета**», отмечается, что обитель спонсировали два княжеских дома – Орбеяны и Прошяны (Хахбакяны). Орбеяны были хозяе-

вами всего края, в том числе им принадлежал монастырь Гермон, а обитель Гладзор находился на непосредственной территории Прошянов. По мнению автора, когда после кончины главы университета рабунапета Есаи Нчеци (1338 г.) новый глава рабунапет Тиратур Киликеци вместе с учениками окончательно перешел в Гермон, в памятных записях больше не упоминается название Гладзор.

Но здесь возникает вопрос, могла ли быть очень близко к монастырю Гермон другая обитель, которая принадлежала бы князьям Прошянам. Оказывается, что да, и именно этому монастырю посвящен следующий подраздел книги, который озаглавлен **«Принадлежащая Прошянам обитель Кареван или Кари ванк, находящаяся вблизи монастыря Гермон»**. Здесь отмечается, что на северо-западе Гермона находится обитель Кареван, или Кари ванк, и вполне возможно, что это и есть Ахберц ванк – Гладзор. Историк Степанос Орбелян сообщает, что в X веке в этих местах жили отшельники. И именно для монахов этих мест и был построен монастырь Гермон. В XIII-XIV веках, судя по одной памятной записи 1335 года, Кари ванк находился под покровительством Прошянов, поскольку находящийся в их подчинении князь (господин) Айрут отмечает, что он там построил молельню. Итак, Кари ванк находился на принадлежащей Прошянам территории, в ущелье Ехегяц (Ехегиса), недалеко от обители Гермон - под покровительством Орбеянов.

В следующем подразделе книги – **«Наблюдения в обители Кари ванк»**, автор пишет о своих последних наблюдениях, сделанных 20-ого июня 2015 года. Он находится в глубоком ущелье Ехегиса (здесь река течет на высоте 1614 м. над уровнем моря), на правобережном косогоре, выше от реки на 479 метров, по прямой линии примерно 450 м. севера – западе от Гермона. GPS координаты географической местности – широта 39 52 41.6 N, долгота 45 23 48.9 E, высота 2091.80 м.

Здесь пока ещё заметные следы позволяют говорить о трех строениях. Основная церковь построена на краю скалы, над пропастью, размерами на основании примерно 7х5 м. Судя по разбросанным всюду чисто тёсаным камням и некоторым деталям (база колонны, часть дверной рамы и т. д.), ко-

торые по стилю относятся XIII-XIV вв. церковь была купольной постройки. При церкви, со стороны западной стены, по её правую и левую сторонам есть также следы основательно разрушенных двух зданий (молельни или часовни?). Здесь на одной каменной плите сохранилась надпись, сделанная господином Айрутом в 1322 году. К большому сожалению, средняя часть сильно обветрена, и название местности невозможно прочитать.

Со стороны остатков восточной стены открывается чудесный вид: с южной стороны монастырь Гермон кажется как на ладони. Автор отмечает, что в 1980-е годы, при его посещениях, недалеко от построек видел ещё и надгробные камни, которые большей частью были покрыты землей.

Следующий стержневой подраздел – «**Общность Кари ванка и Ахберц ванка**». Автор начинает с постановки вопроса – «попробуем выяснить, что неужели возможно было изменение названия монастыря при действующем университете? И тут же возникает второй вопрос: «не является ли одной из причин безрезультатных поисков местонахождения монастыря Гладзор то, что эта обитель имела и другое название?»

Автор затем предполагает, что когда Нерсес Мшеци со своими учениками пришел в Вайоц дзор и от князя Проша получил это место для обитания, оно к этому времени, пожалуй, было заброшенным. Вместо старого названия Кари ванк, возникновение которого было обусловлено наличием в этой местности гигантских скал, предпочёл назвать обитель Родников – **Ахберц ванк**. Смысл нового названия был в том, что основанный им университет должен был стать родником, источником знаний для всей страны. То, что название Ахберц ванк не старое, а новое, видно из того, что через некоторое время после смерти Нерсеса Мшеци оно постепенно ушло в забвение, уступая своё место Гладзору, которое в 1291 г. упоминается как второе название Ахберц ванка, а со временем название Ахберц ванк вообще забывается. Неслучайно, что ученик Нерсеса, историк Степанос Орбемян, добросовестно перечисливший названия монастырей Сюника, также не упоминает ни Ахберц ванк, ни Гладзор. Может быть по причине, что он упоминал название этой местности как Кареван.



Как видно, Нерсес Мшеци и другие основатели Гладзорского университета имели огромное стремление привлечь внимание к этому учебному заведению. И не случайно, что всего лишь через два года после начала деятельности, написанной здесь первой же памятной записью, где указано конкретное место переписки - Ахберц ванк (рукопись 1284 г., получателем является рабунапет Нерсес Мшеци), он еще и восхваляется как **«вторые Афины славные»**. Определение, которое потом переходит в другие памятные записи. Эта формулировка тоже примечательный и абсолютно новый пример Гладзорского прославленного речения.

**А какие существуют аргументы для отождествления Кари ванка и Ахберц ванка.**

**Первый:** это расположение данной обители очень близко к монастырю Гермон.

**Второй:** несмотря на такую близость, территория Кари ванка принадлежала Прошнянам (как и Ахберц ванк).

**Третий:** общность описания местности. Степанос Орбемян описывает Кареван, как находящийся «в верхней части ущелья Ехегаец, **возвышающийся над рекой**». Это отождествляется с памятной записью 1335 г. писца Григора, где он описывает место Гладзора, как **«смотрящая ввысь обитель Гладзор»**. По сути **«возвышающийся»** и **«смотрящий ввысь»** имеют абсолютно одинаковый смысл.

С тыльной стороны Кари ванка, слева и справа из-под скал бьют ключом обильные родники, то есть он полностью соответствует названию **Ахберц ванк**. Другое определение названия - **Гладзор**, тоже соответствует местности, согласно этимологии, поскольку возвышенная площадка, кажется, вот-вот покатится в бездну.

Итак, согласно автору, обитель, находящаяся вблизи монастыря Гермон, на территории старого возвышающегося Каревана, получила своё название Ахберц ванк при основании здесь университета. То есть **Кареван и Ахберц ванк имена одной и той же местности**.

Книга завершается разделом «**Обобщение и выводы**», где приводятся итоги исследования.

**1. Сопоставление свидетельств, содержащихся в исторических документах и памятных записей рукописных книг, показывает, что Ахберц ванк – Гладзор находился вблизи монастыря Гермон.**

Главные аргументы – памятная запись писца Ованнеса 1319 года, где о месте переписывания отмечено «в монастыре Гермон, под покровительством Святого Григора, и у ног великого ритора Есаи», то есть рабунапет Есаи Нчеци находился очень близко. А памятная запись Аракела Ахбатеци 1327 г. написана «в обители Гладзор, который называется Ахберц ванк, под покровительством Святого Нахавка и Святого Григора», где вместе упомянуты главные церкви Гладзора и Гермона (Св. Степанос и Св. Григор). В нескольких рукописях Гермона XV в. опять упоминается Св. Степанос, на этот раз уже вместе с гробницами «святых рабуни» или «святых вардапетов», которые должны быть могилами великих рабунапетов в Гладзоре и Гермоне.

**2. Находящийся вблизи Гермона единственный монастырь – это Кари ванк, который, вероятно, при основании здесь университета был переименован в Ахберц ванк, и именно это и есть место Гладзорского университета.**

Главные аргументы – территория Кари ванка принадлежала Просянам (как и Ахберц ванк), монастыря Гермон – Орбелянам. Описание местности Кари ванка и Ахберц ванка совпадают (возвышающееся, смотрящее ввысь, богатое родниками место). О возможности переименования местности говорит то, что название Ахберц ванк в прошлом не упоминается, и именно при деятельности университета с лёгкостью уступило место названию Гладзор (то есть это не было старое, традиционное название), а после перехода отсюда университета оба названия больше не упоминаются.

### 3. Гладзорский университет функционировал в Ахберц ванке, но для учебных целей служил и монастырь Гермон.

Несмотря на то, что везде в литературе отмечается, что после смерти Есаи Нчеци Гладзор перестал существовать, и в 1338 году при руководстве нового рабунапета Тиратура Киликеци университет перевели в монастырь Гермон, однако университет не «перевёлся» в Гермон, поскольку он еще с давних времён действовал и здесь. Покровителями Гладзора были князья Прошяны и Орбеляны, но в связи с постепенным ослабеванием первых первенство перешло к последним, которые после 1338 г. полностью взяли на себя покровительство над университетом, размещая его только в монастыре Гермон. По всей видимости, для запечатования воспоминания о Прошянах, названия Ахберц ванк и Гладзор были преданы забвению, однако в более поздних рукописях Гермона упоминается имя церкви монастыря Гладзор – Св. Степанос. Если эта позиция правильная, то можно сказать, что в 1282 г. основанный Нерсесом Мшеци университет функционировал в одном месте не до 1338 г. (дата смерти Есаи Нчеци), а до 1356 года (дата смерти Тиратура Киликеци), **целых 74 года.**

Свою статью 1984 года, посвященную анализу источников о местонахождении Гладзора, Арташес Матевосян заключил следующими словами: «В обители Ахберц – Гладзор похоронены великие рабунапеты Нерсес Мшеци, Есаи Нчеци. Эпитафии на их надгробиях и покажут точное место Гладзорского университета, которого можно достичь с помощью раскопок».

Автор книги отмечает, что согласен с этой точкой зрения, но уже и указывает точное место раскопок – Кари ванк (Ахберц ванк), где присутствуют не раскопанные и не изученные надгробные камни, изучение которых может стать ключом развязки узла проблемы. Предлагается провести раскопки еще и в монастыре Гермон, который являлся частью Гладзорского университета. До настоящего времени здесь не проводились какие либо серьезные археологические исследования.

*Перевод автора.*

*Редактор перевода Даниелян Арам Адверикович .*

## Summary

Tigran Mkrtchyan's book on the *New Hypothesis of the Location of the University of Gladzor* starts with the preface of the editor Karen Matevosyan, PhD, Doctor of History. Here he emphasizes the importance of defining still unknown location of Medieval Armenia's renowned University of Gladzor. He considers the hypothesis stated in the book, which can either be confirmed or rejected once the site is excavated. Simultaneously the editor provides some biographical information about the author and on how he embarked on research of this topic.

Tigran Mkrtchyan's study begins with presentation of the *Prehistory of the Location of Gladzor University*, as well as viewpoints and hypotheses on the location of Gladzor monastery presented by previous researchers. According to the manuscript colophons the University of Gladzor was established in 1282 in the Vayots Dzor region, in Aghberts monastery which bore the name of St. Stephen the Protomartyr. Later the monastery received the name Gladzor and gradually extended over time.

According to the most common opinion, Gladzor was located near Tanat (Tanahat) monastery (Ghevont Alishan, Garegin Hovsepian) or even it actually housed the university (Yervand Lalayan, Aram Avetisian, Ashot Abrahamian, Igit Gharibian). This hypothesis was thoroughly dismissed though (Levon Khacherian, Artashes Matevosyan). Other opinions also existed. Artashes Matevosyan mentioned three possible locations of the Aghberts monastery in the vicinity of Tanat, Spitakavor Holy Virgin church or Hermon St. Gregory monastery. Tigran Mkrtchyan focused his research on the location of the university of Gladzor in proximity of Hermon monastery.

Further on *Geographical Environment of the University of Gladzor from written accounts* is presented in the book. In the *Ashkharatsuyts* (Geography) by historian Vardan Areveltsi (Vardan the Easterner) a supplement to the work of Gladzor University (1282-1338) tells that Gladzor is located in the gorge of



the Yeghegis River; whereas one of the manuscript colophons (1335) written in the monastery indicate that it was located in a highland.

The name of Aghberts monastery derives from the large number of springs in the area (*Aghberts vank* means a monastery of springs). Whereas L. Khacherian defines the etymology of Gladzor as follows: a construction built at the edge of a deep ravine, which is about to tumble down. Therefore, **Gladzor was located in the gorge of Yeghegis, on a towering top rich in springs.**

The third chapter is entitled *Location of Gladzor near Hermon Monastery*. A colophon of 1319 written by scribe Hovhannes indicates that Gladzor was located nearby Hermon monastery: '*In Hermon monastery under the patronage of St. Gregory, close to great orator Yesayi*', which means that vardapet (religious teacher of highest rank) Yesayi of Nich was in close proximity to the monastery. While in his colophon of 1327 Arakel of Haghpats indicates the following: '*In Gladzor monastery, named Aghberts, under the patronage of St. Stephen the Protomartyr and St. Gregory*'. Here the two main churches of Gladzor and Hermon are mentioned (St. Stephen and St. Gregory). In several 15<sup>th</sup>-century manuscripts of Hermon, St. Stephen church is mentioned again along with crypts of 'surb vardapetats' (holy fathers of the church), supposedly the tombs of outstanding religious teachers of the university.

According to the author, **the university was located in Aghberts monastery – Gladzor, whereas the territory of Hermon monastery served as an educational center too.**

In the next chapter on the *Patrons of the University of Gladzor* it is stated that two princely houses the Orbelians and Proshians (Khaghbakians) supported the monastery. The Orbelians were the general rulers of the region owning the monastery of Hermon, while the Gladzor monastery was in possession of the Proshians. According to the author, when the new vardapet Tiratur of Cilicia finally moved to Hermon with his students following the death of vardapet Yesayi of Nich (1338), the name of Gladzor was never ever mentioned in the colophons. However, a question then arises whether it could possibly be another monastery nearby Hermon that belonged to the Proshian princes. It turns out it could. Hence, the next chapter of this book entitled *Karevan or Kar (Stone)*

*Monastery, the Monastery of the Proshians near by Hermonis* dedicated to the monastery of Kar.

It is stated that Karevan or Kar monastery is located to the north-west from Hermon and most probably it was the same Aghberts monastery-Glazdor. Historian Stepanos Orbelian indicates that the place served as an abode for hermits in the 10<sup>th</sup> century. And Hermon monastery was built specially for the priests. According to a 1335 colophon, Kar monastery was under the patronage of the Proshians in the 13<sup>th</sup>-14<sup>th</sup> centuries, as also evidenced by their subject prince Hayrut who had built a chapel there. Thus, **Kar monastery was located in Yeghegis gorge, in the territory that belonged to the Proshians. Whereas the monastery of Hermon was in close proximity under the patronage of the Orbelians.**

In the next chapter of the book *Observations in Kar Monastery*, the author presents the latest reviews he made on the spot (20 June, 2015). Kar monastery is situated in the right slope of the deep ravine of the Yeghegis River (the river flows 1614 meters above sea level), with a height of 479 meters in a straight line from Hermon to approximately 450 meters north-west. Geographic location and GPS coordinates are latitude: 39 52 41.6N, longitude: 45 23 48.9E, height: 2091.80 m.

Still discernible traces allow us to refer to three buildings. The main church is built at the edge of the cliff with dimensions of approximately 7x5 meters. As evidenced by polished stones and fragments of column base and lintels scattered around, it was a domed church referring to the 13<sup>th</sup>-14<sup>th</sup> centuries style. Traces of completely ruined two other buildings (probably chapels) are found next to the right and left sides of the western wall of the church. An inscription left by prince Hayrut in 1322 has been preserved on a large stone. Unfortunately, middle part of the inscription is erased and the location name is indiscernible.

Panoramic view opens from the ruins of eastern wall. Hermon monastery looks particularly magnificent from south-eastern side of the monastery. The author states that during the trips he made in 1980s, there were also cemeteries not far from the constructions, which were buried under the earth.

The author starts the next central chapter entitled *Similarities of Kar and Aghberts Monasteries* with the following statement: ‘Let’s find out if renaming of the monastery could take place during the years the university operated’. And then the second question comes forth: ‘Could one of the reasons of vain quests of Gladzor location be that the monastery had another name as well?’

The author then assumes that Nerses of Mush preferred to call the monastery **Aghberts** instead of **Kar** (the name derived from huge stones of the locality; *Kar* in Armenian means *stone*). When he moved to Vayots Dzor along with his students, he was offered this monastery as an abode by prince Prosh, which was then an abandoned place. The name Aghberts implies that the area was rich in springs (*aghbyur* in Armenian means spring) denoting the symbolic meaning of the college as a source of knowledge for the whole country in general.

Shortly after the death of Nerses of Mush the name of Aghberts monastery was gradually forgotten, which proves that this name was new and it was replaced by Gladzor as an additional name of Aghberts monastery as referred to in 1291. Over the time however the name Aghberts eventually was discarded.

No wonder that even Stepanos Orbelian, who conscientiously indicated the monasteries of Syunik region, did not mention neither the name of Aghberts nor Gladzor monasteries probably because he referred to the place as Karevan.

Interestingly, Nerses of Mush and other founders of the University of Gladzor wished to draw all attention to this newly-founded educational center. Therefore, after two years of its foundation the university was referred as the second *Great Athens* in the first colophon written in Aghberts monastery (vardapet Nerses of Mush is the receiver of the manuscript of 1284). Later the name *Great Athens* was applied to Gladzor in other colophons too. The name became a noteworthy example of praising the university.

### **What are the arguments of identifying Kar and Aghberts monasteries?**

First evidence is the nearby location of Hermon monastery.

Secondly, despite closeness of the two monasteries, the territory of Kar monastery (as well as Aghberts monastery) belonged to the Proshians, while that of Hermon monastery belonged to the Orbelians.

Lastly, there are territorial similarities. Stepanos Orbelian describes the monastery of Kar as located *in the **highland** of the Yeghegis gorge overlooking the river*. Parallely, in a 1335 colophon by scribe Grigor, location of Gladzor is described as 'an abbey on **promontory**'. In fact, **highland** and **promontory** have literally the same meaning.

Both sides behind Kar monastery are abound in spring waters, which means the name of **Aghberts** monastery is totally justified. The other definition of the name **Gladzor** also matches the location, which according to its etymology means that the monastery is about rolling down the gorge.

Thus, the author considers that the abbey located on the top of old Karevan next to Hermon monastery, received the name Aghberts during the year of the establishment of the university. Accordingly, **Karevan and Aghberts monasteries are just various names of the same locality**.

In the last chapter of the book *Summary and Conclusions* the author presents research outcomes.

**1. Comparison of historical and archival facts reveals that Aghberts monastery-Gladzor is located near Hermon monastery.**

One of the major arguments is a 1319 colophon by scribe Hovhannes, indicating the place it was written: '*in the Hermon monastery under the patronage of St. Gregory, close to great orator Yesayi*', that is vardapet Yesayi was in close proximity to the monastery. While in a 1327 colophon written by Arakel of Haghbat it is stated: '*in Gladzor monastery called Aghberts under the patronage of St. Protomartyr and St. Gregory*' where the main churches of Hermon and Gladzor - St. Stephen (Surb Stepanos) and St. Gregory (Surb Grigor) - are indicated. In several manuscripts of the 15<sup>th</sup> century St. Stephen church is referred to again as *holy vardapets' church* or *holy priests' church* together with cemeteries which are supposedly the gravestones of great teachers of the university from Gladzor and Hermon.

**2. The only monastery nearby Hermon is the monastery of Kar, which was probably renamed into Aghberts when the university was established here. Hence, this is the location of Gladzor.**

Main arguments are as follows: the territory of Kar monastery belonged to the Proshians (as well as Aghberts monastery), while the territory of Hermon monastery belonged to the Orbelians. Location descriptions of the two monasteries coincide: highland, promontory, abound in springs. Another evidence of renaming is that Aghberts monastery was not mentioned before and it easily yielded its name to Gladzor during the functioning of the university. The two names were largely forgotten after the university was moved from this site.

### **3. The University of Gladzor functioned in Aghberts monastery, though Hermon monastery served for educational purposes too.**

Literary sources indicate that after the death of Yesayi of Nich the University of Gladzor stopped its activity and was moved to Hermon monastery upon the initiative of the new vardapet Tiratur of Cilicia. However, the university was not actually moved to Hermon as it was already functioning there relong before. The Proshian and Orbelian princes were the patrons of the University of Gladzor. Due to gradual loss of power of the formers, the latters assumed sole patronage of the university after 1338. Thus, Hermon monastery became the main educational center.

To wipe out any reminiscence of the Proshians, the names of Aghberts and Gladzor monasteries sank into oblivion. Nevertheless, Gladzor St. Stephen Church is mentioned in one of late manuscript colophons of Hermon. If true, we can assume that the university founded by Nerses of Mush in 1282 in the same place existed for **74 years** until 1356 (the death of Tiratur of Cilicia) and not until 1338 (the death of Yesayi of Nich).

In an article of 1984 dedicated to the research of the location sources of Gladzor, Artashes Matevosyan concluded, ‘Great teachers Nerses of Mush and Yesayi of Nich are buried in Gladzor monastery. Their tombstone epitaphs will indicate precise location of the University of Gladzor once the site is excavated.’

The author of the book also shares this opinion, at the same time indicating the exact site of excavations: the monastery of Kar (Aghberts monastery). The study of tombstones found here, which were neither excavated nor studied



before, could shed light on the problem of the research. Finally, the author offers also to undertake excavation in Hermon monastery, which being a part of the University of Gladzor, needs substantial archeological research as the site has not been excavated up to date.

*English Translation: Armine Bachachyan*

- Աբրահամյան Ա., Գլաձորի համալսարանը, Երևան, 1983:
- Ալիշան Ղ., Սիսական, տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893:
- Անառյան Տ., Տայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942:
- Ավետիսյան Ա., Գլաձորի համալսարանը, «Էջմիածին», 1956, Դ- Ե:
- Արևշատյան Ս., Մաթևոսյան Ա., Գլաձորի համալսարանը միջնադարյան Տայաստանի լուսավորության կենտրոն, Երևան, 1984:
- Գևորգյան Ա., Վայոց ձորի և Որոտանի մանրանկարչությունը XIII-XVII դդ., Երևան, 2003:
- Դիվան հայ վիմագրության, պրակ 3, Վայոց Ձոր, Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրաջաններ, կազմող՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967:
- ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950:
- ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Լ. Խաչիկյան), մասն Ա, Երևան, 1955:
- ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Լ. Խաչիկյան), մասն Բ, Երևան, 1958:
- Լալայան Ե., Շարուր-Դարալագեազի գաւառ, «Ազգագրական հանդես», գիրք XII, Թիֆլիս, 1905:
- Խաչերյան Լ., Պատմական աղբյուրներում Գլաձորի հիշատակության հարցի շուրջը, Տայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր, հաս. գիտ., 1965, թիվ 10:
- Խաչերեան Լ., Եսայի Նչեցին եւ Գլաձորի համալսարանը, Լոս Անջելես, 1988:
- Տայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երևան, 2008:
- Տայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984:

- Ղարիբյան Ի., Գլաձոր (տեղադրությունը, պեղումները, վիմագիր արձանագրությունները), Երևան, 1983:
- Մաթևոսյան Ա., Նոր վկայություններ Գլաձորի համալսարանի մասին, «Պատմա-քանասիրական հանդես», 1984, թիվ 4:
- Մաթևոսեան Կ., Դրուագներ Նորավանքի եպիսկոպոսական աթոռի պատմությունից (Արատես եւ Վերին Նորավանք), «Նորավանք» տարեգիրք, Բ, Մոնրեալ-Երեւան, 2001:
- Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Է (յօրինեաց Ս. Ճեմնեմեան), Վենետիկի, 1996:
- Մկրտչյան Ա., Էջեր Սյունյաց աթոռի պատմությունից, Ս. Էջմիածին, 1995:
- Յովսեփեան Գ., Խաղբակեանք կամ Պոռշեանք Տայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969:
- Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836:
- Պողարեան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Բ, Երուսաղէմ, 1967,
- Պողարեան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Դ, Երուսաղէմ, 1969:
- Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910:
- Վարդան Վարդապետ, Աշխարհացոյց, քննական հրատարակություն Ն. Պերպերեանի. Փարիզ, 1960:
- Յուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, կազմ.՝ Մուրատեան Ս., Մարտիրոսեան Ն., Երուսաղէմ, 1967:
- Փիրղալեմեան Ղ., Նշխարք պատմութեան Տայոց, հ. Բ (Մատենադարան, ձեռ. 4515):
- Григорян Г., Очерки истории Сюника IX-XIV вв., Ереван, 1990.



## Բովանդակություն

|                                                                            |    |
|----------------------------------------------------------------------------|----|
| Երկու խոսք .....                                                           | 5  |
| Գլաձորի տեղորոշման հարցի նախապատմությունը .....                            | 7  |
| Գլաձորի համալսարանի աշխարհագրական միջավայրը .....                          | 12 |
| Գլաձորի տեղորոշումը Ներմոնի վանքի մոտ .....                                | 15 |
| Որոշ հարակից դիտարկումներ .....                                            | 24 |
| Գլաձորի համալսարանի հովանավորների հարցի շուրջ .....                        | 26 |
| Ներմոնի վանքի մոտ գտնվող Պռոշյանների վանքը՝<br>Քարեվան կամ Քարի վանք ..... | 33 |
| Դիտարկումներ Քարի վանքում .....                                            | 38 |
| Քարի վանքի և Աղբերց վանքի ընդհանրությունները .....                         | 44 |
| <br>Ամփոփում և եզրակացություններ .....                                     | 51 |
| Резюме .....                                                               | 54 |
| Summary .....                                                              | 61 |
| Վկայակոչված գրականություն .....                                            | 68 |



Տիգրան Մառլենի Սկրտչյան  
ԳԼԱԶՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՆՈՐ ՎԱՐԿԱԾ

Мкртчян Тигран Марленович  
НОВАЯ ВЕРСИЯ МЕСТОПОЛОЖЕНИЯ  
ГЛАДЗОРСКОГО УНИВЕРСИТЕТА

Tigran Mkrtchyan  
NEW HYPOTHESIS OF THE LOCATION  
OF THE UNIVERSITY OF GLADZOR

«ՍՈՒՂՆԻ» հրատարակչություն

---

Հնավայրի լուսանկարները՝ Տիգրան Սկրտչյանի  
Ձևավորումը՝ Վարդան Դալլաքյանի  
Տպագրված է «Ձանգակ-97» ՍՊԸ տպագրատանը

---

Երևան • 2016





[mkrtyan1957@list.ru](mailto:mkrtyan1957@list.ru)

ISBN 978-99941-33-79-6